

3247

Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

**ԿՈՄՅԵՐԻՏԱՐԻՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ**

3K33

4-68

**ԿՈՒՍՅՐԱՏ**

ՅԵՐԵՎԱՆ 1933

21 JUN 2005

ՅԿՅՅ

4-68

պ


Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

20 NOV 2009

# ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1010  
42439

ԿՈՒՍԴՐՈՑ



ՅԵՐԵՎԱՆ

Քաբգմ. Վ. Թերգիրայան

Խմբ. Հ. Սարգսյան

Տեխն. խմբագիր՝ Մ. Եփրեյ

Սրբագրիչ՝ Ա. Տեր-Մկրտչյան

Հանձնված է արտադրության 26 մարտի 1933 թ.

Ստորագրված է տպագրելու 13 մայիսի 1933 թ.

Տպած 5.000 Հրատ. № 97 123,000 տպ. թշ.

Պետհրատի տպարան Պատվեր № 791 Դրավիտ № 7730 (Բ)

## ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՍԻՈՒԹՅԱՆԸ

Վոլգոյն լենինյան կոմյերիտմիությանը նրա 10-ամյա հոբելյանի օրը:

Լենինյան կոմյերիտմիությունը յեղել է և մնում է մեր հեղափոխության յերիտասարդ ռեզերվը: Բանվորա-գյուղացիական յերիտասարդ սերնդի տասնյակ և հարյուր հազարավոր լավագույն. ներկայացուցիչները դաստիարակվել են կոմյերիտմիության շարքերում, անցել են հեղափոխական բովից և լցվել մեր կուսակցության, մեր խորհուրդների, մեր պրոֆմիությունների, մեր Կարմիր բանակի, մեր Կարմիր նավատորմի, մեր կոոպերացիայի, մեր կոլտնտեսական կազմակերպությունների մեջ—փոխարինելու բայլշևիկների հին գվարդիային:

Կոմյերիտմիությանը հաջողվում էր այդ դժվար խնդիրը, վորովհետև նա իր աշխատանքը տանում էր կուսակցության ղեկավարությամբ, կարողանում էր իր գործունեության մեջ միացնել ուսումն առհասարակ, լենինյան ուսումը հատկապես ամենորյա գործնական աշխատանքի հետ, նա կարողանում էր բանվորների և բանվորուհիների, գյուղացիների և գեղջկուհիների նոր սերունդը դաս-

տխարակել ինտերնացիոնալիզմի վոգուվ, կարողանում եր գտնել ընդհանուր լեզու հին և նոր լեռնինյանների, հին և նոր գվարդիայի միջև, նա կարողանում եր իր ամբողջ աշխատանքը շենքարկել պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիստական շինարարության հաղթանակի շահերին:

Միայն այդ պատճառով կոմյերիտմիությանը հաջողվեց բարձր պահել Լեռնի դրոշմ: Հուսանք, վոր կոմյերիտմիությունը հետագայում ևս կկարողանա կատարել իր պարտքը մեր և միջազգային պրոլետարիատի հանդեպ: Մեր կուսակցության յերկու միլիոնանոց ռեզերվին, լեռնինյան կոմյերիտմիությանը վոյզնւլին:

Կեցցե՛ կոմյերիտական սերունդը:

Ի. ՍՏԱԼԻՆ

27 հոկտեմբերի 1928

## ԿՈՍՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՌԻ ԱՐՏԱՄԱՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄՍՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՏԱՐԱԿԵԼԻՓ ԱՇԽԱՆՔԻ ՀԱՐՑՆԵՐԻ ՇՈՒՐԱԸ 1924 Թ. ԱՊՐԵԼԻ 3-ԻՆ ՌԿԿ ԿԵՆՏՐԱԼՈՒՄԻՆ ԿԻՑ ՀՐԱՎԵՐՎԱԾ ԽՈՐՀՐԻՄԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Յեռ նախ և առաջ վորոշ բան պետք ե ասեմ այն դիրքի մասին, վոր բռնեց յերիտասարդության Կենտկոմը կուսակցական դիսկուսիայի հարցում: Սխալն այն եր, վոր ՌԿՑԵՄ Կենտկոմը չարունակում եր համառ կերպով լուրջ թյուն պահպանել այն բանից հետո, յերբ տեղերն արդեն արտահայտվել ելին: Սակայն ճիշտ չեր լինի Կենտկոմի լուրջ թյունը բացառել չեզոքությամբ: Պարզապես չափից դուրս չզուլուլթյուն ելին անում:

Այժմ մի քանի խոսք վիճարանությունների մասին: Յեռ կարծում եմ, վոր ձեզ մոտ սկզբունքային տարաձայնություններ չկան: Յեռ խոչորացույցով զննեցի ձեր թեզիսներն ու հոգվածները և այնուամենայնիվ չզտա սկզբունքային տարաձայնություններ: Բայց դրա փոխարեն կա խառնաշփոթություն և մի կույտ մտադածին «անհաշտելի» հակասություններ:

Առաջին հակասությունն ե միտթյան վորպես կուսակցության «սկզբունք» հակադրումը

միութեանը՝ վորպէս կուսակցութեան «գործի-  
քը»: Ի՞նչ է միութեանը—ռեզերվ թե գործիք:  
Յե՛ւ վ այս, և՛ այն: Այդ պարզ է, և ընկերներին  
ճանաչում ել այդ ասվեց: Յերիտասարդու-  
թեան կոմունիստական միութեան—ռեզերվ,  
այն ռեզերվն է, վոր գոյանում է բանվորներից  
և գյուղացիներից, վորոնցից կուսակցութեան-  
նը լրացնում է իր շարքերը: Բայց նա միաժա-  
մանակ և գործիք է, գործիք կուսակցութեան  
ձեռքում, վորը իր ազդեցութեանն է յենթար-  
կում յերիտասարդութեան մասսաները: Կարելի  
յէր ավելի կոնկրետ ասել, վոր միութեանը  
կուսակցութեան գործիքն է, կուսակցութեան  
ոժանդակ զենքն է այն իմաստով, վոր կոմ-  
յերիտմիութեան ակտիվ կազմը հանդիսանում  
է կուսակցութեան գործիքը ներգործելու հա-  
մար միութեան շարքերից դուրս գտնվող յերի-  
տասարդութեան վրա: Այս հասկացողութեան-  
ները միմյանց չեն հակասում և նրանք չեն  
կարող հակադրվել մեկը մյուսին:

Յերկրորդ իրը թե անհաշտելի հակասու-  
թեանն այն է, վոր վորոշ ընկերներին կար-  
ծիքով «միութեան դասակարգային քղաքա-  
կանութեանը վորոշվում է վոչ թե նրա կազ-  
մով, այլ նրա գլուխ կանգնած մարդկանց կայու-  
նութեամբ»: Կայունութեանը հակադրում են  
կազմին: Այս հակասութեանն ել նույնպէս  
մտացածին է, վորովհետեւ **ՌԿՅԵՄ** դասա-  
կարգային քաղաքականութեանը վորոշվում է  
թե՛ մեկով, թե՛ մյուսով—թե՛ կազմով, թե՛

վերնաշերտի կայունութեամբ: Յեթե կայուն  
մարդիկ ամեն ժամ յենթարկվում են միու-  
թեան՝ վողով խորթ կազմի ներգործութեան,  
մի միութեան, վորի անդամները վայելում են  
հավասար իրավունքներ, ապա այդպիսի կազ-  
մի առկայութեանը չի կարող անհետանալ  
անցնել միութեան աշխատանքի և քաղաքակա-  
նութեան համար: Ինչո՞ւ կուսակցութեանը  
կարգավորում է իր կազմը: Վորովհետեւ նա  
զետե, վոր կազմը ազդում է իր աշխատանքի  
վրա:

Վերջապէս ելի մի հակասութեան—նույն-  
պէս մտացածին,—վորը վերաբերում է միու-  
թեան զերին և նրա աշխատանքին գյուղացի-  
ների շրջանում: Վոմանք հարցը դնում են այն-  
պէս, վոր միութեան խնդիրն է իբր թե «ամ-  
բապնդել» ազդեցութեանը գյուղացիների  
շրջանում և վոչ թե ընդարձակել այն: Իսկ ու-  
րիշներն ել ուզում են իբր թե «ընդարձակել  
ազդեցութեանը», բայց ամբապնդելու համա-  
ձայն չեն: Դրա վրա ուզում են կառուցել  
պլատֆորմը դիսկուսիայում: Պարզ է, վոր այս  
յերկու խնդիրների հակադրումն արհեստական  
է, վորովհետեւ ամենքը լավ են հասկանում,  
վոր միութեանը միաժամանակ պետք է և՛ ամ-  
բապնդի, և՛ ընդարձակի իր ազդեցութեանը  
գյուղում: Ճշմարիտ է, **ՌԿՅԵՄ** չենապագի թե-  
զիսներում մի տեղ կա վոչ ճկուն մի նախադա-  
սութեան գյուղացիների մեջ տարվելիք աշխա-  
տանքի մասին: Բայց վո՛չ ընկ. Թարխանովը,

վո՛չ եւ ՌԿՅԵՄ Կենտրոնի մեծամասնության  
մյուս ներկայացուցիչները չեն պնդում այդ  
անհարմար տեղի վրա և համաձայն են ուղղել  
այն: Արժե՞ միթե սրանից հետո վիճել մանր  
բաների պատճառով:

Իայց կա մի հակասություն Կոմունիստա-  
կան յերիտասարդության միության կյանքի  
և գործունեյության մեջ, իրական, վոչ մտա-  
ցածին հակասություն, վորի մասին յես կու-  
զեյի մի քանի խոսք ասել: Յես նկատի ունեմ  
յերկու տենդենցների առկայությունը միու-  
թյան մեջ—բանվորական և գյուղացիական  
Յես նկատի ունեմ այդ տենդենցների միջև յե-  
ղած հակասությունը, վորը զգալ ե տալիս  
էրեն և վորի կողքով չի կարելի անցնել: Այդ  
հակասության հարցը ամենաթույլ տեղն  
հոետորների ճառերում: Ամենքը խոսում են  
այն մասին, վոր անհրաժեշտ ե ընդարձակել  
բանվորներին միության մեջ ներգրավելու  
գծով, սակայն ամենքը սայթաքում են, յեր  
անցնում են գյուղացիությանը, գյուղացիու-  
թյունը ներգրավելու հարցին: Նույնիսկ ճա-  
ռախոսներից նրանք, վորոնք վո՛չ իմաստու-  
թյուն և վոչ ել խորամանկություն եյին բանեց-  
նում, սայթաքեցին այդ հարցում:

Իկնբախ ե, ՌԿՅԵՄ առաջ գրված ե յեր  
կու պրորէկտ—բանվորական և գյուղացիական  
Ակնբախ ե, քանի վոր կոմյերիտիություն  
բանվորա-գյուղացիական միություն ե, այլ  
յերկու տենդենցները, այդ հակասություններ

հետազայում ել կմնան միության մեջ: Վո-  
մանք կատեն, թե պետք ե ներգրավել բանվոր-  
ներին, լոելով գյուղացիության մասին, իսկ  
ուրիշները կասեն, թե պետք ե ներգրավել գյու-  
ղացիներին, թերագնահատելով միության  
պրոլետարական տարրի նշանակությունը,  
վորպես ղեկավար տարրի: Այս ներքին հակա-  
սությունը, վորը կա միության բնույթի մեջ,  
ստիպում ե հենց ճառախոսներին սայթաքել:  
Ճառերում գուղահեռ եյին անցկացնում կու-  
սակցության և կոմյերիտիության միջև: Սա-  
կայն խնդիրն այն ե, վոր այդիպիսի գուղահե-  
ռականություն գոյություն չունի իրականում,  
վորովհետեւ մեր կուսակցությունը բանվորա-  
կան ե և վոչ թե բանվորա-գյուղացիական,  
այնինչ կոմյերիտիությունը բանվորա-գյու-  
ղարիական միություն ե: Ահա թե ինչու կոմ-  
յերիտիությունը չի կարող լինել միայն բան-  
վորական միություն, այլ պետք ե լինի միա-  
ժամանակ և՛ բանվորական, և՛ գյուղացիական  
միություն: Մի բան պարզ ե. միության ներ-  
կա կառուցվածքով՝ ներքին հակասություն-  
ները և տենդենցների պայքարը հետազայում  
ես անխուսափելի կլինեն:

Իրավացի յեն նրանք, վորոնք ասում են,  
թե միջակ գյուղացի յերիտասարդությունը  
պետք ե ներգրավել կոնսակցության մեջ, սա-  
կայն այստեղ պետք ե զգուշ լինել և չի կարելի  
ընկնել բանվորա-գյուղացիական կուսակցու-  
թյան ղիւրքը, դեպի վորը շուռ են տալիս յեր-

րեմն վորոչ պատասխանատու աշխատողներ: Շատերը աղաղակ բարձրացրին, ասելով. «Դուք ներգրավում եք բանվորներին, ինչո՞ւ նույն չափով կուսակցութեան մեջ չներգրավել գյուղացիներին: Յեկեք ընդունենք հարյուր կամ յերկու հարյուր հազար գյուղացիները»: Կենսկոմը դրան դեմ է, վորովհետեւ մեր կուսակցութեանը պետք է լինի բանվորական կուսակցութեան: 70 կամ 80 տոկոս բանվորներ և 20—25 տոկոս վոչ-բանվորներ—ահա մոտավորապես ինչպիսին պիտի լինի փոխհարաբերութեանը կուսակցութեան մեջ: Կոմյեթիտմիութեան մեջ դրութեանը մի փոքր տարբեր է կուսակցութեանից: Յերիտասարդութեան կոմունիստական միութեանը հանդիսանում է բանվորական և գյուղացիական յերիտասարդութեան հեղափոխական տարրերի կամավոր, ազատ միութեան: Առանց գյուղացիների, առանց գյուղացիական յերիտասարդութեան մասսայի նա կդադարի չանվորա-գյուղացիական միութեան լինելուց: Սակայն գործը սկսած է դնել այնպես, վոր ղեկավար դերը մնա պրոլետարական տարրին:

## ԳՅՈՒՂԻ ԿՈՄՅԵԻՏԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՄԱՍԻՆ

ՀԱՌԻ ԱՐՏԱՍԱՐԱՎԱՏ ՌԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԿԱԶՄԵՑՈՒՐՈՅԻ 1925 թ.  
ԱՊՐԻԼԻ 6-Ի ՆՍՏՈՒՄ

Ընկերներ: Առաջին խնդիրն է ապահովել յերիտասարդութեան միութեան հիմնական

պրոլետարական կորիզը, վորպես ամբողջ միութեանը ղեկավարող կորիզ: Զեկուցողը վոչինչ չասաց այդ հարցի մասին: Այդ դարձանալի ել չէ, վորովհետեւ խոսքը վերաբերում է կոմյեթիտմիութեան գյուղի աշխատանքին, և վոչ թե պրոլետարական կորիզին: Սակայն այդ չի խանգարում, վոր պրոլետարական կորիզի ապահովումը մնա կոմյեթիտմիութեան հիմնական խնդիրը: Յես կարծում եմ, վոր աշխատանքն այդ ուղղութեամբ կոմյեթիտմիութեան մեջ գնում է ավելի կամ պակաս հաջող կերպով: Կարելի չէ ասել առանց չափազանցութեան, վոր բանվորական յերիտասարդութեան ներգրավումը կոմյեթիտմիութեան մեջ ընթանում է հաջող կերպով, և հեռու չէ այն ժամանակը, յերբ միութեանը կընդգրկի ամբողջ բանվորական յերիտասարդութեան ինն տասներորդից վոչ պակասը:

Յերկրորդ խնդիրն է պրոլետարական կորիզի աշխատողների ճիշտ դասավորումը միութեան հիմնական շրջաններում և հանդուցային կետերում ապահովելու համար յերիտասարդութեան գյուղացիական մասի իրական ղեկավարումը այդ կորիզի ուժերով: Յես յեղնում եմ այն բանից, վոր յերիտասարդութեան գյուղացիական մասը գերազանցում է նրա պրոլետարական մասից: Յես յեղնում եմ այն բանից, վոր յերիտասարդութեան պրոլետարական ուժերը բավարար չեն, վոր հնամավոր լինի հավասարապես բաշխել նրանց

Խորհրդային միության բոլոր գալառներում և շրջաններում: Ուստի անհրաժեշտ է այդ ուժերը բաշխել այնպես և այնպիսի կետերում, վորտեղից ավելի հեշտ կլինեն ապահովել դեկավարությունը գյուղական յերիտասարդության վերաբերմամբ: Յես չեմ կարծում, վոր կոմյերիտմիությունը այս խնդիրը կատարել և նույնքան հաջողությամբ, վորքան առաջին խնդիրը: Բայց և այնպես հիմք կա յենթադրելու, վոր կոմյերիտմիությունը այս խնդրի իրազորման աշխատանքը կատարում է ամբողջ յեռանդով, և այդ չի ուշանա մոտիկ ապագայում տալու իր արդյունքները:

Յերրորդ խնդիրն է ապահովել կոմյերիտմիության համար գյուղացիական յերիտասարդության հոծ ախտիվ գյուղում, քաղաքականորեն դաստիարակել այդ ախտիվը, դարձնել այն պրոլետարական քաղաքականության իրազործողը գյուղում և վերածել այն պրոլետարիատը գյուղացիության աշխատավոր մասսաների հետ շագկապող ցեմենտի: Այս դործը դժվար է և վերին աստիճանի բարդ: Այս խնդիրը կարճ ժամանակում լուծել միանգամայն անհնար է: Անհրաժեշտ են հսկայական ջանքեր և կոմյերիտմիության պրոլետարական կորիզի ուժերի մեծագույն լարում այդ խնդիրն իրազործելու համար: Սակայն այդպետք է լուծել ինչ էլ լինի: Վորովհետև առանց դրան հնարավոր չէ վճել կոմյերիտմիության ամրապնդումը, վոչ էլ զորքման ապահովումը

բանվորների և գյուղացիների միջև: Սակայն ինչպես ապահովել գյուղացիական ախտիվ կոմյերիտմիության համար, ինչպես դաստիարակել այդ ախտիվը և ինչպես անել, վոր նա կարողանա դառնալ պրոլետարական քաղաքականությունն իրազործողը գյուղում:

Ասում են, վոր միայն գյուղական բջիջների քարտուղարների թիվը կոմյերիտմիության մեջ հասնում է 27,000-ի: Ասում են, վոր բացի բջիջների քարտուղարներից, կան դեռ ախտիվ աշխատող կոմյերիտականներ կոոպերացիայում, խորհուրդներում, փոկերում, կուլտուրական հիմնարկներում և այլն: Ասում են, վոր այս բոլորը միասին պետք է տա մոտ 100,000-անոց գյուղական կոմյերիտական ախտիվ: Ճիշտ է այս բոլորը, թե վոչ—դժվար է ասել: Բայց յեթե այս բոլորը ճիշտ է, պետք է ասեմ, վոր այդ ախտիվը՝ յեթե հմուտ կերպով ողտազործվի, կարող է կազմել մեծագույն ուժ, բնդունակ հրաշքների: Այս հանգամանքը կարևոր է մանավանդ նրա համար, վոր կուսակցությունը ներկայումս գյուղում ավելի պակաս քանակությամբ ախտիվ ունի:

Յեւ ահա առաջանում է խնդիր. ինչպես դաստիարակել այդ հոծ ախտիվը, ինչպես դարձնել նրան պրոլետարական քաղաքականությունն իրազործողը գյուղում վոչ թե խոսքով, այլ գործով:

Յես մտադիր չեմ այստեղ տալու սպառիչ լրատատախան: Մի կարճ ճառում այդ անելու

վոչ մի հնարավորութիւն չկա: Սակայն նշել մի քանի հիմնական պայմաններ, վորոնք անհրաժեշտ են այդ խնդրին ճիշտ մոտենալու համար, միանգամայն հնարավոր է նաև կարճ ճառում: Ի՞նչ պայմաններ են դրանք: Այդ պայմանները առնվազն ութն են:

Առաջին: Անհրաժեշտ է, վոր յերիտասարդութեան գյուղական ակտիվին հայթայթվեն հանրամատչելի գրքույկներ և տեղեկատուներ, վորոնք լուսարանում են խորհրդային իշխանութեան ղեկրեաները չքավորութեան ոգովին: Անհրաժեշտ է, վոր այդ ակտիվը խորապես իմանա այդ ղեկրեաները, կարողանա դրանք լուսարանել չքավորութեանը և կարողանա պաշտպանել չքավորների շահերը այդ ղեկրեաների հիման վրա կուլակների գործալուծի ղեմ: Յես կարծում եմ, վոր այդ ղեկրեաները չիմանալը և նրանց սխտեմատիկ խախտումը գյուղում իշխանութիւն ունեցողների կողմից հանդիսանում է գյուղի ներկա կարգերի հիմնական չարիքներից մեկը: Կոմյերիտական ակտիվը գյուղում պետք է կանգնի հեղափոխական որինականութեան պաշտպանութեան գիրքերում: Նա պետք է կրճքով պաշտպանի գյուղի չքավորներին: Այդ խնդիրը, անկասկած, հասարակ և պրոգնիկ է: Անկասկած, շատ ավելի հեշտ է շատախոսել համաշխարհային հեղափոխութեան մասին, քան թե կենսագործել այդ հասարակ և առորյա խնդիրը, վորը կապված է խորհրդային ղեկրեաների

հետ: Սակայն անկասկած է և այն, վոր առանց դրան հնարավոր չէ վոչ մի գործում:

Յերկրորդ: Անհրաժեշտ է, վոր յերիտասարդութեան գյուղական ակտիվին հայթայթվեն հանրամատչելի գրքույկներ ագրոնոմիայի տարրական հիմունքների վերաբերյալ: Անհրաժեշտ է, վոր այդ ակտիվը ուսումնասիրի գյուղատնտեսութիւնը, ծանոթանա նրա բարելավման միջոցների հետ և կարողանա տալ գյուղացուն անհրաժեշտ տեղեկութիւններ այդ բնագավառում: Գյուղացին հաճախ կոմյերիտականին վերաբերվում է վոչ լուրջ, հեղնական կերպով: Այդ տեղի յե ունենում նրա համար, վոր գյուղացին նրան համարում է տնտեսութիւնից կտրված, տգետ, ծուլ: Այդտեղից խնդիր է առաջանում—կոմյերիտականին մոտեցնել, կապել տնտեսութեանը: Կոմյերիտական—ակտիվիստը կարող է նվաճել գյուղացու հարգանքը և վստահութիւնը միայն այն դեպքում, յեթե մերվի գյուղատնտեսութեան հետ, յեթե նա սովորի տալ ոգտակար խորհուրդներ գյուղացիական տնտեսութիւնը բարձրացնելու, այդ տնտեսութիւնը բարելավելու և ամրապնդելու համար: Այդ գործը իհարկե հեշտ չէ, գուցե և նույնիսկ տաղակալի յե: Սակայն այդ արդէլը չէ, վոր այդ գործը լինի անհրաժեշտ գործ գյուղացիութեան վստահութիւնը նվաճելու համար:

Յերրորդ: Անհրաժեշտ է, վոր գյուղի

կոմյերիտական ակտիվին հայթայթվեն մատ-  
չելի գրքուկներ գյուղատնտեսական հարկի,  
տեղական բյուջեյի, յերկրի ֆինանսական  
դրության մասին: Հարկը և տեղական բյուջեն  
այժմ հանդիսանում են առաջին գործը գյու-  
ղում: Այդ հողի վրա այժմ կատարվում են  
անթիվ չարարկություններ: Ի՞նչպես բաշ-  
խել հարկերը, վորպեսզի չքավորը չտուժի,  
իսկ կուլակը չաղատվի հարկային բեռից,  
ի՞նչպես ծախսել դրամը տեղական բյուջեյով  
և ի՞նչ կարիքների համար, ի՞նչպես անել,  
վոր այդ հողի վրա չարարկությունները հայ-  
տաբերվեն և արմատախիլ արվեն,—այս բո-  
լորն այնպիսի հարցեր են, վորոնց կողքով  
չի կարող անցնել կոմյերիտական-ակտի-  
վիստը: Խառնվել ամբողջ գործին և ողնության  
հասնել աշխատավոր գյուղացիությանը —այս  
ե խնդիրը: Այս գործը նույնպես հեշտ չե և  
վոչ ել օյնքան դրավիչ: Սակայն առանց  
այդ գործի գյուղում չկա և չի կարող լինել  
վոչ մի խորհրդային շինարարություն:

Չորրորդ: Անհրաժեշտ ե, վոր գյուղի  
կոմյերիտական ակտիվին հայթայթվեն մատ-  
չելի տեղեկատվությունը խորհրդային շինարա-  
րության, խորհուրդների աշխուժացման և  
գյուղացիությունը գյուղի, շրջանի, գա-  
վառի կողմավորման գործին մասնակից դարձ-  
նելու և այլ հարցերի վերաբերյալ: Անհրա-  
ժեշտ ե, վոր կոմյերիտական-ակտիվիստը  
հիմնավոր կերպով իմանա տեղական խոր-

հուրդների իրավունքներին և պարտականու-  
թյուններին, խորհուրդների հանդեպ գյու-  
ղացիների իրավունքներին և պարտականու-  
թյուններին, ընտրական սիստեմին, ընտրու-  
թյունների ընթացքին վերաբերող որոնա-  
դրությունները և այլն: Բացատրել գյուղա-  
ցիությանը կուսակցության և խորհրդային  
իշխանության քաղաքականությունը գյու-  
ղում, ձգտել վորպեսզի այդ քաղաքականու-  
թյունը կյանքում կիրառվի ազնիվ և բարե-  
խիղճ կերպով—ահա այս ե խնդիրը: Առանց  
դրան ավելորդ ե մտածել գյուղացիության  
վստահությունը դրավելու, գյուղացիական  
ակտիվը ընդլայնելու, գյուղում պրոլետա-  
րական դեմոկրատիան արմատացնելու մա-  
սին:

Հինգերորդ: Անհրաժեշտ ե գյուղի  
կոմյերիտական ակտիվին մատակարարել  
մատչելի գրքուկներ գյուղատնտեսական,  
վարկային և սպառողական կոոպերացիայի,  
արտելների և կուլեկտիվ տնտեսությունների  
մասին: Անհրաժեշտ ե, վոր կոմյերիտական  
ակտիվը կարողանա ներգրավել գյուղացիու-  
թյունը գյուղում կոոպերատիվային հասա-  
րակայնություն հիմնելու գործում: Այդ  
գործը վերին աստիճանի դժվար ե և բարդ,  
սակայն բացարձակապես անհրաժեշտ ե  
գյուղը սոցիալիստական շինարարությանը  
հաղորդակից անելու համար: Գյուղատն-  
տեսական և վարկային կոոպերացիան այժմ

ստաճանակարգ նշանակութիւնն ունի գյուղացու համար: Պետք է աշխատել, վոր կոռպերացիան դառնա գյուղացու համար հարազատ և մոտիկ դործ—ահա խնդիրը:

Այստեղ պետք է ուշադրութիւն դարձնել այն բանի վրա, վոր գյուղացիութեան չքավոր խավերի ինվենտարազրկութիւնը գյուղում ստեղծում է հատուկ մի հանգամանք, վորը նպաստում է արտելների և կոլեկտիվ տնտեսութիւնների ստեղծմանը՝ պետութեան վարկային հիմնարկների կողմից յուլյց արվելիք վորոշ ոգնութեան պարագայում: Խնդիրն այն է, վոր գյուղացիութեան չքավոր խավերը հնարավորութիւն ունենան այդ դեպքում ստանալ համապատասխան արտոնյալ վարկ: Կոմյերիտական-ակտիվիստը չի կարող անուշադրութեան մատնել այս կենսական հարցերը:

Վեցերորդ: Անհրաժեշտ է, վոր գյուղի կոմյերիտական ակտիվին տրվեն անհրաժեշտ ցուցումներ և նյութեր գյուղի կուլտուրական շինարարութեան վերաբերյալ— խրճիթ-ընթերցարանների ծավալման, անգրագիտութեան վերացման և այլն: Ակտիվիստ-կոմյերիտականը վորպէս խորհուրդների և ընդհանրապէս կուլտուրական ուժերի բնական ոգնականը գյուղում՝ խորհրդային կուլտուրայի արմատացման գործում—ահա խնդիրը:

Յոթերորդ: Անհրաժեշտ է, վոր գյուղի կոմյերիտական ակտիվը ստանա ճշգրիտ ցու-

ցումներ կոմյերիտականների իրավունքների և պարտականութիւնների, կոմյերիտութեան և կուսակցութեան, խորհրդի և կոմյերիտութեան փոխհարաբերութիւնների մասին: Անհրաժեշտ է, վոր ակտիվիստ-կոմյերիտականը իր վրա նայի վորպէս կուսակցութեան և խորհրդային իշխանութեան ոգնականը գյուղում: Գյուղում հրամաններ տրձակելը, բնորոշութիւնների ժամանակ անկարգութիւններ անելը, կուսակցական, կոռպերատիվային և խորհրդային կազմակերպութիւններին փոխարինելու փորձերը, խուլիգանական արարքները այսպէս կոչված հակակրօնական պրոպագանդի ժամանակ—այդ ամենը պետք է դէն չալրտել և լիկվիդացիայի յենթարկել, վորպէս կոմյերիտութեան դրոշն արատաւորող և կոմյետականի կոչմանը միանգամայն անարժան բան: Անողոր պայքար այդ խայտառակութիւնների դեմ և ճիշտ փոխհարաբերութիւնների սահմանում կոմյերիտութեան և խորհրդային-կուսակցական որդանների միջև—ահա խնդիրը:

Ութերորդ: Անհրաժեշտ է գյուղի կոմյերիտական ակտիվին հայթայթել մատչելի գրքույկներ բանվորների և գյուղացիների դաշինքի, այդ դաշինքի իմաստի և նշանակութեան, պրոլետարիատի դիկտատուրայի, կոմունիզմի հիմունքների, վերջապէս Հոկտեմբերյան հեղափոխութեան պատմութեան

մասին, և այն մասին, թե ի՞նչպես են ապրել առաջ դյուղացիները ցարի և կալվածատիրոջ որով, ի՞նչպես են ապրում այժմ և ի՞նչպես պետք է ապրեն զողման ամբապնդման և սոցիալիզմի արմատացման պայմաններում: Ահտիվիստ-կոմյերիտականը բնավ չպետք է հարմարվի դյուղացու նախապաշարումներին: Այդ նախապաշարումները հաշվի առնելը և նրանց հարմարվելը յերկու տարբեր բաներ են: Նա պետք է իմանա դյուղացու հետ խոսել կոմունիստի լեզվով: Նա պետք է կարողանա համոզել դյուղացուն կոնկերտ փաստերով, վոր սոցիալիզմից դուրս նրա համար չկա փրկություն:

Սրանք են այն պայմանները, վորոնց կատարումն անհրաժեշտ է քաղաքականապես դաստիարակելու համար դյուղի կոմյերիտական ակտիվը և դարձնելու նրան պրոլետարական քաղաքականություն կիրառողը դյուղում: Կոմյերիտության Կենտկոմի խնդիրն է հեշտացնել և վերահսկողության յենթարկել այդ պայմանների կենսագործումը:

Խոսում են դյուղի կոմյերիտության հսկայական աճման վտանգների մասին: Ասում են, թե դյուղական յերիտասարդությունը ներխուժում է կոմյերիտության մեջ: Անկասկած, այստեղ վորոշ վտանգ կա: Սակայն անկասկած է նաև այն, վոր կոմյերիտությունը կարող է չվախենալ այդ վտանգից, յեթե նա կարողանա պատվով կատարել

վերեում դրված խնդիրները: 100,000- անոց կոմյերիտական ակտիվը դյուղում այնպիսի ուժ է, վորի համար վտանգավոր չի կարող լինել դյուղական յերիտասարդության վոչ մի ներհոսանք: Ամբողջ գործն այն է, վոր կատարի աշխատանք տանել այդ ակտիվի քաղաքական դաստիարակության համար: Ամբողջ գործն այն է, վոր կարողանալ այդ ակտիվի աշխատանքը ուղղել դեպի բանվորների և դյուղացիների դաշինքի ամբապնդման գործը: Ամբողջ գործն այն է, վոր ողտագործել այդ ակտիվը ներգրավելու համար դյուղացիությունը նոր, խորհրդային շինարարության մեջ:

Այսպես ուրեմն.

ա) ապահովել պրոլետարական կորիզը կոմյերիտության մեջ վորպես հիմնական ղեկավար ուժ,

բ) բաշխել այդ կորիզի ակտիվ ուժերը Խորհրդային միության հիմնական չրջաններում այդ ղեկավարության տեսպիկտից:

գ) դաստիարակել դյուղի կոմյերիտական ակտիվը դյուղում պրոլետարական քաղաքականությունն ապահովելու վորով—որանք են ընդհանրապես կոմյերիտության և հատկապես կոմյերիտության Կենտկոմի հերթական խնդիրները:

Իր առաջ ունենալով այս խնդիրները և իրագործելով դրանք ամենորոյա աշխատանքի

ընթացքում, կարելի չէ չվախենալ այն վտանգ-  
ներէց, վորոնք կանգնած են կոմյեքիտմիութեան  
ճանապարհին գլուղում:

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՌԵՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՄԻՈՒ- ԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՌՔԻՎ

### Ընկերներ.

Ձեր ներկայացուցիչները առաջարկեցին  
ինձ արտահայտվել կոստակցութեան և կոստակ-  
ցական աշխատանքի խնդիրներէ մասին պրո-  
լետարական ուսանողութեան մեջ:

Թույլ տվեք ձեզ մի քանի խոսք տալ  
այդ առթիւ:

Տվյալ մոմենտին դրութեան առանձնահատ-  
կութիւնն այն է, վոր մեր յերկրի պրոլետա-  
րիատին հաջողվեց ստեղծել իր համար պայ-  
մաններ, վորոնք անհրաժեշտ են սոցիալիստա-  
կան շինարարութեան համար: Սխալ է, վոր չի  
կարելի սոցիալիզմ կառուցել մի յերկրում,  
վոր հաղթել և զուրս է վոնդել կապիտալիստ-  
ներին ու կալվածատերերին: Մի յերկիր, վոր  
ունի պրոլետարիատի գիկտատոնըս, ոժտված  
է հսկայական ռեսուրսներով և վայելում է բո-  
լոր յերկրներէ պրոլետարներէ աջակցու-  
թիւնը—այդպիսի յերկիր կարող է և պետք է  
կառուցի սոցիալիզմ: Լենինն իրավացի չէ,  
ասելով, թէ մեր յերկիրը ունի բոլոր տվյալ-  
ները «լիակատար սոցիալիստական հասարա-

կութիւն կառուցելու համար»: Տվյալ մոմեն-  
տի առանձնահատկութիւնն այն է, վոր մենք  
արդեն լուրջ քայլեր ենք արել սոցիալիզմի  
կառուցման գործում, սոցիալիզմը դարդար-  
ված իկոնայից վերածելով առերջա գործնա-  
կան աշխատանքի պրոդակի առարակա:

Ի՞նչ պետք է լինի պրոլետարական ուսա-  
նողութեան դերն այս շինարարական աշխա-  
տանքում:

Նրա դերը, անկասկած, կարևոր է, յեթե-  
վոչ առաջնակարգ: Բուհերը և կոմբուհերը,  
բանֆակները և տեխնիկումները—դրանք դրպ-  
րոցներ են տնտեսութեան և կուլտուրայի հրա-  
մանատարական կազմ պատրաստելու համար:  
Բժիշկներ և տնտեսագետներ, կոոպերատոր-  
ներ և մանկավարժներ, յերկրաբաններ և վի-  
ճակագիրներ, տեխնիկներ և քիմիկոսներ,  
գլուղատնտեսներ և ճանապարհագետներ, ա-  
նասնաբուժներ և անտառագետներ, ելիտրա-  
գետներ և մեքենագետներ—սրանք բոլորը ա-  
յդպէս հրամանատարներն նոր հասարակութեան  
կառուցման, սոցիալիստական տնտեսութեան  
և սոցիալիստական կուլտուրայի կառուցման  
ասպարեզում: Ձի կարելի կառուցել նոր հա-  
սարակութիւն առանց նոր հրամկազմի, ինչ-  
պէս չի կարելի կառուցել նոր բանակ, առանց  
նոր հրամկազմի: Նոր հրամկազմի առավելու-  
թիւնն այն է, վոր նա կոչված է կառուցելու  
վոչ թէ աշխատավորներին շահագործելու  
նպատակով մի բուրը հարուստների շահերի

Համար, այլ աշխատավորներին ազատագրելու նպատակով, ընդդեմ մի բուռը շահագործողների: Ամբողջ խնդիրն այն է, վոր բուհերի ուսանողները—բանվոր և գյուղացի, կուսակցական և անկուսակցական—հասկանան իրենց այդ պատվավոր դերը և կատարեն այն գիտակցորեն, խղճի մտք: Այսպես ուրեմն, այնպես անել, վոր սլոբեստարական ուսանողությունը դառնա սոցիալիստական տնտեսության և սոցիալիստական կուլտուրայի գիտակից կառուցողը—այս է կուսակցության առաջին խնդիրը:

Սակայն նոր հասարակություն կառուցել չի կարելի միմիայն հրամկազմի ուժերով, առանց աշխատավոր մասսաների անմիջական աջակցության: Սոցիալիզմի կառուցման համար բավական չեն նոր հրամկազմի գիտելիքները: Դրա համար անհրաժեշտ է նաև վստահություն և աջակցություն աշխատավոր մասսաների կողմից դեպի հրամկազմը: Կապիտալիզմի որով կառուցող հին հրամկազմի բնորոշ գիծն այն էր, վոր նա կտրված էր քանվորներից և գյուղացիներից, նա իրեն բարձր էր դասում աշխատավոր մասսաներից, նրա համար թանկ չէր այդ մասսաների վո՛չ վստահությունը, վո՛չ ել աջակցությունը, վորի համար և նա զրկված էր և՛ մեկից, և՛ մյուսից: Մեր յերկրի համար այդ ճանապարհը բոլորովին անպետք է: Նոր տնտեսության և նոր կուլտուրայի շինարարության նոր հրամկազմը

նոր է կոչվում հենց այն պատճառով, վոր նա պետք է վերջնականապես և անշեղորեն հրաժարվի հրամանատարության հին յեղանակներից: Վո՛չ թե կտրվել մասսաներից, այլ սերտորեն կապվել նրանց հետ, իրեն վեր չդասել մասսաներից, այլ քայլել մասսաների առջևից, տանելով նրանց իր հետևից, չխորթանալ մասսաներից, այլ ձուլվել նրանց հետ և նվաճել մասսաների վստահությունը, աջակցությունը,—սրանք են նոր հրամանատարական կազմի տնտեսավարության նոր ուղիները: Այս ուղիներից դուրս հնարավոր չէ վո՛չ մի սոցիալիստական շինարարություն: Ուրեմն ձգտել, վորպեսզի սլոբեստարական ուսանողությունը համարի իրեն աշխատավոր մասսաների անխզելի մասը, ձգտել, վորպեսզի ուսանողները զգան իրենց վորպես հասարակական աշխատողներ և վարվեն վորպես իսկական հասարակական աշխատողներ—այս է կուսակցության յերկրորդ խնդիրը:

Վերջապես կոմունիստ ուսանողների մասին մասնավորապես: Ասում են, թե կոմունիստ ուսանողները քիչ առաջադիմություն են ցույց տալիս գիտությունների մեջ: Ասում են, վոր նրանք այս տեսակետից լրջորեն հետ են մնում անկուսակցականներից: Ասում են, վոր ուսանող կոմունիստները գերադասում են Ղրաշվել «բարձր քաղաքականությամբ», Ժամանակի յերկու յերրորդն սպանելով «համաշխարհային հարցերի» շուրջը անվերջ վիճարա-

նություններով: Ճի՞շտ է այս բոլորը: Յես  
կարծում եմ, վոր ճիշտ է: Յեվ յեթե այդ ճիշտ  
է, ապա դրանից հետեւում են առնվազն յերկու  
յեզրակացություններ: Առաջին, կոմունիստ  
ուսանողները կանգնում են ա սոցիալիստական  
չինարարության վատ զեկավարներ դառնալու  
վտանգի առաջ, վորովհետեւ չի կարելի զեկա-  
վարել սոցիալիստական հասարակության կա-  
ռուցումը, առանց տիրապետելու գիտություն-  
ներին: Յերկրորդ, նոր հրամանատարական  
կազմի պատրաստման դործը կարող է դառնալ  
մենաշնորհ հին պրոֆեսորների ձեռքում, վո-  
րոնք կարիք ունեն փոխարինվելու նոր մարդ-  
կանցով, վորովհետեւ չի կարելի պատրաստել նոր  
փոխարինողներ և նոր գիտական աշխատակից-  
ներ աշխարհի մարդկանցից, վորոնք չեն ցան-  
կանում կամ չեն կարող տիրապետել գիտու-  
թյանը: Ավելորդ է խոսել այն մասին, վոր  
այդ սմենը չի կարող ու չպիտի սպառնալիք  
չատեղծել սոցիալիստական շինարարության  
ամբողջ գործին: Կարելի՞ չէ արդյոք հաշտվել  
այդպիսի դրության հետ: Պարզ է, վոր չի կա-  
րելի: Ուստի կոմունիստ ուսանողները և առ-  
հասարակ խորհրդային ուսանողները պետք է  
պարզորոշ կերպով դնեն հերթական այս խն-  
դիրը. տիրապետել գիտությանը և ստեղծել  
նոր փոխարինողներ հին պրոֆեսորական կազ-  
մի տեղը նոր, խորհրդային մարդկանցից:  
Սրանով յես բնավ չեմ ուզում ասել, վոր ու-  
սանողները չպետք է զբաղվեն քաղաքականու-

թյամբ: Ամենևին: Յես ասում եմ միայն, վոր  
ուսանող-կոմունիստները պետք է կարողանան  
միացնել քաղաքական աշխատանքը գիտու-  
թյանը տիրապետելու գործի հետ: Ասում են,  
թե դժվար է ձեռք բերել այդ միացումը: Դա  
ճիշտ է, իհարկէ: Բայց յերբմանի՞ց է, վոր կոմու-  
նիստները սկսել են վախենալ դժվարություն-  
ներից: Դժվարությունները հենց նրա համար  
գոյություն ունեն մեր շինարարության ճանա-  
պարհին, վորպեսզի մենք կռվենք նրանց դեմ  
և հաղթահարենք: Բացի այդ պետք է ուշա-  
դրության առնել ևս մի հանգամանք: Յես կար-  
ծում եմ, վոր մեր յերկիրն իր հեղափոխական  
ունակություններով և արագիցիաներով, մշտ-  
քի անշարժության և լճացման դեմ մղած իր  
պայքարով ներկայացնում է ամենից ավելի  
բարենպաստ պայմաններ գիտությունների  
ծաղկման համար: Հաղիվ թե կարելի չէ կաս-  
կածել, վոր կապիտալիստական չկուլայի հին  
պրոֆեսորներին հատուկ քաղքենիական նեղ-  
մությունը և ուստի նախ մի-մի ծանր քարեր  
են՝ կախված գիտության վտաններից: Հաղիվ թե  
կարելի չէ կասկածել, վոր գիտական լիակա-  
տար և ազատ ստեղծագործության ընդունակ  
են միայն նոր մարդիկ, ազատ այդ թերու-  
թյուններից: Մեր յերկիրն այս տեսակետից  
ունի մեծ ապագա՝ դառնալով կապանքներից  
ազատ գիտությունների տնկարան և միջնա-  
բերդ: Յես կարծում եմ, վոր մենք սկսում  
ենք մտնել այդ ուղին: Սակայն տխուր և ա-

նարժան կլինեն, յեթե կոմունիստ ուսանող-  
ները հեռու մնային գիտությունների դարգաց-  
ման մեծ ճանապարհից: Ահա թե ինչու գի-  
տությանը տիրապետելու լողունգը ստանում է  
հատուկ նշանակություն:

Այսպես ուրեմն, ձգտել, մորպեսդի պրո-  
լետարական ուսանողությունը և ամենից ա-  
ռաջ կոմունիստ-ուսանողները հասկանան գի-  
տությանը տիրապետելու անհրաժեշտություն-  
ը և տիրապետեն նրան,—սա յե կուսակցու-  
թյան յերրորդ խնդիրը:

Ընդունեցե՛ք վողջույն. Ի. ՍՏԱԼԻՆ

1 ապրիլի 1925 թ.

## ԿՈՍՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽԵԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏԱՌԵԱՆ ՀԿՈՄՍՈՄՈՒԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ-ՅԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

ՏՎԱԾ ՀԱՄԱՅՆՈՒՆ

ՈՒԿՅԵՄ ԹՈՐՆԱՄԾԱԿԻ ԱՌԹՎ.—1925 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29

1. Ի՞նչ հիմնականն պարտավորություն է  
դնում կոմյերիտմիություն վրա Խորհրդային  
միության ժամանակակից միջազգային ու-  
նեքիին դրությունը:

Հարցը համապանց ընդհանուր է դրված,  
այդ պատճառով էլ պատասխանը կարող է լի-  
նել միայն ընդհանուր: Խորհրդային միության  
ժամանակակից միջազգային և ներքին դրու-  
թյունը կոմյերիտմիության վրա հիմնական  
պարտավորություն է դնում խոսքով և գործով  
աջակցելու բոլոր յերկրների ճնշված դասա-

կարգերի հեղափոխական շարժմանը և Խոր-  
հրդային միության պրոլետարիատի պայքա-  
րին՝ հանուն սոցիալիզմի կառուցման, հանուն  
պրոլետարական պետության ազատության և  
անկախության: Սակայն սրանից հետևում է,  
վոր կոմյերիտմիությունն իր այդ ընդ-  
հանուր խնդիրը կատարել կարող է  
միայն այն դեպքում, յեթե նա իր ամբողջ  
աշխատանքի մեջ ղեկավարվի այն ղեկավար  
ցուցումներով, վորոնք բղխում են կոմու-  
նիստական ինտերանացիոնալից և Ռուսաստա-  
նի կոմունիստական կուսակցությունից:

2. Ի՞նչ խնդիրներ են դրված կոմյերիտ-  
միության առաջ լիկվիդատորության (սոցիա-  
լիստական շինարարության հեռանկարի կո-  
րուստ), նացիոնալիզմի (միջազգային-հեղա-  
փոխական հեռանկարի կորուստ) և կուսակցու-  
թյան ղեկավարության նվազեցման վտանգնե-  
րի կապակցությամբ, այսինքն այն վտանգնե-  
րի կապակցությամբ, վորոնք նշվել են «Հար-  
ցեր և պատասխաններ» բրոշյուրում:

Կարճ ասած, կոմյերիտմիության խնդիր-  
ներն են այս բնագավառում՝ դաստիարակել  
մեր բանվորա-գյուղացիական յերիտասարդու-  
թյունը լենինիզմի վողջով: Իսկ ի՞նչ է նշանա-  
կում դաստիարակել յերիտասարդությունը լենի-  
նիզմի վողջով: Այդ նշանակում է, առաջին,  
արմատացնել նրա մեջ այն գիտակցությունը,  
թե սոցիալիստական շինարարության հաղթա-  
նակը մեր յերկրում հնարավոր է և անհրա-

ժեշտ: Այդ նշանակում է, յերկրորդ, ամբար-  
տեղել նրա մեջ այն համոզմունքը, թե մեր  
բանվորական պետութիւնը միջազգային պրո-  
լետարիատի ծնունդն է, վոր նա բազա յե բո-  
լոր յերկրներում հեղափոխութեան ծավալման  
համար, վոր մեր հեղափոխութեան վերջնական  
հաղթանակը միջազգային պրոլետարիա-  
տի գործն է: Այդ նշանակում է,  
յերրորդ, դաստիարակել յերիտասարդութիւն-  
նր Ռուսաստանի կոմունիստական կուսակցու-  
թեան ղեկավարութեանը վստահելու վողով:  
Կոմյերիտմիութեան մեջ պետք է ստեղծել այն-  
պիսի կադրեր և այնպիսի ակտիվ, վորոնք կա-  
րողանան յերիտասարդութեան դաստիարա-  
կութիւնը տանել հենց այդ ուղղութիւննե-  
րով:

Կոմյերիտականները աշխատում են շինա-  
րարութեան բոլոր բնագավառներում՝ ար-  
դյունաբերութեան մեջ, գյուղատնտեսութեան  
մեջ, կոոպերացիայում, խորհուրդներում,  
կուլտուր-կրթական կազմակերպութիւննե-  
րում և այլն: Յուրաքանչյուր կոմյերիտական-  
ակտիվիստ շինարարութեան բոլոր բնագա-  
վառներում կատարած իր աշխատանքը պետք  
է չադկապի սոցիալիստական հասարակու-  
թեան կառուցման հեռանկարների հետ: Պետք  
է, վոր նա կարողանա իր առօրյա աշխատանքը  
տանել այդ հեռանկարի իրագործման վողով  
և ուղղութեամբ:

Կոմյերիտականները աշխատում են ամե-

նասյլազան ազգութիւնների բանվորների և  
գյուղացիների մեջ: Ինքը կոմյերիտմիութիւն-  
նը յուրահատուկ ինտերնացիոնալի վորոչ նմա-  
նութիւն է: Յեւ այստեղ դեր է խաղում վոչ  
միայն կոմյերիտմիութեան ազգային կազմը,  
այլ և այն փաստը, վոր կոմյերիտմիութիւնը  
անմիջականորեն հարում է Ռուսաստանի  
կոմունիստական կուսակցութեանը, վորը  
հանդիսանում է համաշխարհային պրո-  
լետարական ինտերնացիոնալի կարեւորա-  
դույն ջոկատներից մեկը: Ինտերնացիո-  
նալիզմը այն հիմնական գաղափարն է, վոր  
ներթափանցում է կոմյերիտմիութեան աշխա-  
տանքի մեջ: Դրա մեջ է նրա ուժը: Դրա մեջ է  
նրա զորութիւնը: Պետք է, վոր ինտերնացիո-  
նալիզմի վողին միշտ սավառնի կոմյերիտմիութե-  
ան վրա: Պետք է, վոր մեր յերկրի պրոլե-  
տարիտի սլայքարի հաջողութիւնները և ան-  
հաջողութիւնները կոմյերիտականների գի-  
տակցութեան մեջ չադկապվեն միջազգային հե-  
ղափոխական շարժման հաջողութիւնների և  
անհաջողութիւնների հետ: Պետք է, վոր կոմ-  
յերիտականները սովորեն գիտել մեր հեղափո-  
խութիւնը վոչ վորպես ինքնանպատակ, այլ  
վորպես միջոց և նեցուկ պրոլետարական հե-  
ղափոխութեան հաղթանակի համար բոլոր  
յերկրներում:

Կոմյերիտմիութիւնը ձևականորեն վոչ-  
կուսակցական կազմակերպութիւն է: Սակայն  
նա գրանով հանդերձ կոմունիստական կազմա-

կերպութիւնն է: Այս նշանակումն է, վոր ճեշտեան լինելով բանվորներն և գյուղացիներն վոչ-կուսակցական կազմակերպութիւնն, կոմ-յերիտմիութիւնն զբանով հանդերձ պետք է աշխատի մեր կուսակցութեան ղեկավարութեամբ: Ապահովել յերիտասարդութեան վստահութիւնն զեպի մեր կուսակցութիւնն, ապահովել մեր կուսակցութեան ղեկավարութիւնն կոմյերիտմիութեան մեջ, — այս և խնդիրը: Կոմյերիտականը պետք է հիշի, վոր կուսակցութեան ղեկավարութիւնն ապահովելը ամենագլխավորը և ամենակարևորն է կոմյերիտմիութեան ամբողջ աշխատանքում: Կոմյերիտականը պետք է հիշի, վոր առանց այդ ղեկավարութեան կոմյերիտմիութիւնն չի կարող կատարել իր հիմնական խնդիրը՝ բանվորա-գյուղացիական յերիտասարդութեան դաստիարակութիւնն պրոլետարիատի գիկտատուրայի և կոմունիզմի վողով:

3. Ի՞նչպէս պետք է դնել ներկայումս կոմյերիտմիութեան անման հարցը: Պե՞տք է արդյոք հիմնականում և հետագայում շարունակել բանվոր, բատրակ, չփախած և միջակ յերիտասարդութեան լավագույն մասին իր շարքերում ներգրավելու կուրսը, թե պետք է գլխավոր ուշադրութիւնը դարձնել միութեան մեջ արդեն ընդգրկված յերիտասարդութեան մասաների ամրապնդման և դաստիարակման վրա:

Չի կարելի ասել՝ կամ ա՛յս, կամ ա՛յն:

Պետք է անել և՛ մեկը, և՛ մյուսը: Պետք է կոմյերիտմիութեան մեջ ներգրավել, ըստ հնարավորի, ամբողջ բանվոր յերիտասարդութիւնն և գյուղի չքավորութեան ու միջակների լավագույն տարրերը: Սակայն զբանով հանդերձ պետք է ուշադրութիւնը կենտրոնացնել այն բանի վրա, վոր կոմյերիտմիութեան ակտիվը դաստիարակի և կոսի կոմյերիտմիութեան նոր անդամներին: Պրոլետարական կորիզի ուժեղացումը կոմյերիտմիութեան կարևորագույն հերթական խնդիրն է: Այս խնդրի կատարման մեջ է այն յերաշխիքը, վոր կոմյերիտմիութիւնն կընթանա ճիշտ ուղիով: Բայց կոմյերիտմիութիւնն միայն բանվոր յերիտասարդութեան կազմակերպութիւնն չէ: Կոմյերիտմիութիւնն բանվորա-գյուղացիական յերիտասարդութեան կազմակերպութիւնն է: Ուստի պրոլետարական կորիզի ուժեղացման հետ միասին պետք է աշխատանք կատարվի գյուղացի յերիտասարդութեան լավագույն տարրերը ներգրավելու, կոմյերիտմիութեան պրոլետարական կորիզի և նրա գյուղացիական մասի միջև սո՞ւր դաշինք ապահովելու համար: Առանց զբան անհնար է պրոլետարական կորիզի ղեկավարութիւնն գյուղացի յերիտասարդութեան վերաբերմամբ կոմյերիտմիութեան շարքերում:

4. ՌԼԿՅԵՄ մի քանի օրհանգստական կոմիտեներ, կանանց պատգամավորական ժողովների որինակի վրա հեմկելով, ձեռնար-

կել են կազմակերպել անկուսակցական գյուղացի յերիտասարդութեան պատգամավորական ժողովներ մշտական կազմով: Այս ժողովների գերն ե գյուղացի, գլխավորապես միջակ յերիտասարդութեանը համայնքներ կոմյերիտութեան գեկավարութեան ներքո: Ճիշտ ե արդյոք այդպիսի դիրքավորումը, և արդյոք այստեղ վտանգ չկա՞, վոր այդ պատգամավորական ժողովները կարող են վերածվել յուրատեսակ անկուսակցական գյուղացի յերիտասարդութեան միութեանների, վորոնք կարող են նակադրել իրենց մեր յերիտասարդութեան միութեանը:

Այսպիսի գիբբը, իմ կարծիքով, ճիշտ չէ: Ինչո՞ւ: Ահա թե ինչո՞ւ:

Առաջին, այստեղ թաղնված ե մի տեսակ յերկյուղ միջակից, միջակ յերիտասարդութեան իրենից հեռու պահելու ձգտում, նրանից խույս տալու փորձ: Ճիշտ և արդյոք այս ձգտումը: Իհարկե, վոչ: Մենք վոչ թե պետք ե մեզնից հեռացնենք միջակ յերիտասարդութեանը, այլ մոտեցնենք մեզ, մոտեցնենք կոմյերիտութեանը: Միայն այս միջոցով հնարավոր ե դաստիարակել միջակ յերիտասարդութեան մեջ վստահութեան դեպք բանվորները, վստահութեան դեպք կոմյերիտութեան պրոլետարական կորիզը, վստահութեան դեպք մեր կուսակցութեանը:

Յերկրորդ, անկասկած, կոմյերիտութեան

թեան կից միջակ յերիտասարդութեան հատուկ պատգամավորական ժողովները գյուղացիութեան բոլոր խմբերի աշխուժացման ներկա պայմաններում անխուսափելիորեն կվերածվեն միջակ յերիտասարդութեան մի հատուկ միութեան: Յեվ այդ հատուկ միութեանը անհրաժեշտութեան բերումով ստիպված կլինի հակադրել իրեն գոյութեան ունեցող յերիտասարդական միութեանը և նրա դեկավար Ռիկ-ին, դեպքի բերն կքաշի կոմյերիտութեան գյուղացի մասը և այդպիսով կստեղծի կոմյերիտութեանը յերկու միութեան—բանվոր յերիտասարդութեան միութեան և գյուղացի յերիտասարդութեան միութեան—բաժանելու վտանգ: Կարո՞ղ ենք մենք արդյոք հաշվի չառնել այդպիսի մի վտանգ: Իհարկե, չենք կարող հաշվի չառնել: Հարկավոր ե մեզ արդյոք այդպիսի բաժանումը մանավանդ ներկա պարագայում, մանավանդ մեր զարգացման արդի պայմաններում: Իհարկե, հարկավոր չէ: Ընդհակառակը, մեղ հարկավոր ե այժմ, վոր գյուղացի յերիտասարդութեանը վոչ թե հեռանա, այլ մոտենա կոմյերիտութեան պրոլետարական կորիզին, վոչ թե գոտութեան, այլ կուտ դառնենք նրանց միջև:

Յերրորդ, չի կարելի արգարացնել միջակ յերիտասարդութեան պատգամավորական ժողովների ստեղծումը, հիմնվելով բանվորուհիների և գեղջկուհիների պատգամավորական ժողովների դոյութեան վրա: Չի կարելի նույն

մակարդակի վրա գնել հանձին կոմյերիտմիութ-  
յան իր առանձին կազմակերպությունն ու-  
նեցող բանվորա-գյուղացիական յերիտասար-  
դությունը և իրենց առանձին կազմակերպու-  
թյունը չունեցող բանվորուհիներին և գեղջկու-  
հիներին, ինչպես և չի կարելի չիտթել միջակ  
գյուղացիական յերիտասարդությունը բանվո-  
րուհիների հետ, վորոնք բանվոր դասակարգի  
մի մասն են կազմում:

Միջակ յերիտասարդության պատգամա-  
վորական ժողովների գոյությունը վտանգ և  
ստեղծում յերիտասարդության միության հա-  
մար, մինչդեռ բանվորուհիների և գեղջկուհի-  
ների պատգամավորական ժողովների գոյու-  
թյունը վոչ վոքի վոչ մի վտանգ չի սպառնում,  
վորովհետև այժմ բանվորուհիներն ու գեղջ-  
կուհիները չունեն իրենց հատուկ կազմակեր-  
պությունը, ինչպես յերիտասարդական միու-  
թյունն է:

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր ավե-  
լորդ և կոմյերիտմիության կից միջակ յերի-  
տասարդության հատուկ պատգամավորական  
ժողովներ ստեղծելը:

Յես կարծում եմ, վոր կոմյերիտմիության  
VI համագումարը ճիշտ վարվեց, բավականա-  
նալով գյուղում կոմյերիտմիության չուրջ  
ոժտանդակ կազմակերպություններ ստեղծելու  
առաջարկությամբ, ինչպես, որինսակ, ինքնա-  
զարգացման խմբակներ, գյուղատնտեսական  
խմբեր և այլն:

5. Հնարավոր և արդյոք մեր պայմաննե-  
րում կոմյերիտական ակտիվի համար գուցակ-  
ոել իր գործնական աշխատանքը մարքսիզմ  
ու լենինիզմը հանգամանորեն ուսումնասիրելու  
հետ, և ի՞նչ պետք է անեն այդ ուղղությամբ  
կոմյերիտական կազմակերպությունները և  
առանձին կոմյերիտականները:

Նախ՝ մի փոքրիկ տեղեկություն մարք-  
սիզմի և լենինիզմի վերաբերյալ: Հարցի նման  
ձևակերպման պարագայում կարելի յե կար-  
ծել, թե մարքսիզմը ուրիշ է, լենինիզմը՝ ու-  
րիշ, վոր կարելի յե լենինիստ լինել՝ առանց  
լինելու մարքսիստ: Մակայն այդպիսի պատ-  
կերացումը ճիշտ համարել չի կարելի: Լենի-  
նիզմը—լենինյան ուսմունք հանած մարքսիզմ  
չէ: Լենինիզմը իմպերիալիզմի և պրոլետարա-  
կան հեղափոխությունների եպոխայի մարք-  
սիզմն է: Այլ կերպ ասած՝ լենինիզմն իր մեջ  
ամփոփում է այն ամենը, ինչ տվել է Մաքսը,  
դումարած այն նորը, վոր Լենինը մուծեց  
մարքսիզմի գանձարանը և վորը անհրաժեշտա-  
բար բղիում է այն ամենից, ինչ տվել է  
Մաքսը (պրոլետարիատի դիկտատուրայի  
ուսմունքը, գյուղացիական հարցը, ազգային  
հարցը, կուսակցությունը, ռեֆորմիզմի սո-  
ցիալական արմատների հարցը, կոմունիզմի  
մեջ հիմնական թեքումների հարցը և այլն):  
Այդ պատճառով ավելի լավ կլիներ հարցը  
ձևակերպել այնպես, վոր խոսքը վերաբերի  
մարքսիզմին կամ լենինիզմին (ինչ վոր հիմ-

նականում նույնն է) և վոչ թե մարքսիզմին և լենինիզմին:

Յերկրորդ, վոչ մի կասկած չկա, վոր առանց զուգակցելու կոմյերիտական ակտիվի գործնական աշխատանքը նրա տեսական պատճառածան հետ («լենինիզմի ուսումնասիրումը») հնարավոր չէ վոչ մի քիչ թե շատ խմատատվոր կոմունիստական աշխատանք կատարել կոմյերիտիության մեջ: Լենինիզմը բոլոր յերկրների բանվորների հեղափոխական շարժման փորձի ընդհանրացումն է: Այդ փորձն այն ուղեցույց աստղն է, վոր լուսավորում է պրակտիկների ուղին իրենց առօրյա աշխատանքի մեջ և վորն ուղղություն է տալիս նրանց: Պրակտիկները չեն կարող ունենալ վոչ վտանգություն իրենց աշխատանքի մեջ, վո՞րեւ այդ աշխատանքի ճշտության գիտակցություն, յեթե նրանք չեն տիրապետել այդ փորձին թեկուզ նվազագույն չափով: Աշխատել խարխափելով, աշխատել մթության մեջ, այս է վիճակված պրակտիկ աշխատողներին, յեթե նրանք չեն ձգտում տիրապետել լենինիզմին, յեթե նրանք չեն ցանականում իրենց պրակտիկ աշխատանքը զուգակցել անհրաժեշտ տեսական պատրաստության հետ: Ուստի լենինիզմի ուսումնասիրությունը, լենինյան ուսումն անհրաժեշտագույն պայմանն է արդեւ կոմյերիտական ակտիվը դարձնելու իսկական լենինյան ակտիվ, վորն ընդունակ է դասախոս

րակելու բազմամիլիոն կոմյերիտական յերիտասարդությունը պրոլետարիատի դիկտատուրայի և կոմունիզմի վոգով:

Սակայն հնարավոր է արդյոք թերթիայի և պրակտիկայի այդպիսի զուգակցում կոմյերիտական ակտիվի ծանրաբեռնվածության ներկա պայմաններում:

Այո՛, հնարավոր է: Այդ գործը դժվար է, ի՞նչ խոսք: Բայց միանգամայն հնարավոր է, քանի վոր այդ այնքան անհրաժեշտ է, քանի վոր առանց այդ պայմանի անկարելի չէ ստեղծել իսկական լենինյան ակտիվ կոմյերիտիության մեջ: Մենք չենք կարող նմանվել այն թուլամորթ մարդկանց, վորոնք փախչում են դժվարություններից և հեշտ աշխատանք են վորոնում: Դժվարությունները հենց նրա համար դոյություն ունեն, վոր մարդիկ կովեն նրանց դեմ և հաղթահարեն նրանց: Բայլ չեիկները անշուշտ կկորչեյին կապիտալիզմի դեմ միշտ իրենց սլայքարում, յեթե նրանք չսովորեյին հաղթահարել դժվարությունները: Կոմյերիտիությունը չեւ լինի կոմյերիտիություն, յեթե նա վախենար դժվարություններից:

Մեծ խնդիր է վերցրել իր վրա կոմյերիտիության ակտիվը: Ուստի նա պետք է իր մեջ ուժեղ գտնի հաղթահարելու համար դեպի նպատակը տանող ճանապարհին յեղած բոլոր և ամեն տեսակի դժվարությունները:

Համբերատու և համար լենինյան ուսում—

ահա այն ուղին, վոր պետք է անցնի կոմյունիստիկական ակտիվը, յեթե նա իրոք ուզում է դաստիարակել յերիտասարդության միլիոնավոր մասսաները պրոլետարական հեղափոխության վողով:

## ՎՈՍՅԵՐԻՏԱՌՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՐԱՅԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ

«ԼԵՆԻՆԻՉՄԻ ՀԱՐՑՆԵՐԸ» ԳՐԻԻ ՆԵՐԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

Վերը յես խոսեցի պրոլետարիատի դիկտատուրայի մասին՝ նրա պատմական անխուսափելիության տեսակետից, նրա դասակարգային բովանդակության տեսակետից, նրա պետական բնույթի տեսակետից, վերջապես նրա խորտակողական և ստեղծագործական խնդիրների տեսակետից, վորոնք իրագործվում են մի ամբողջ պատմական ժամանակաշրջանում, վոր կոչվում է կապիտալիզմի սոցիալիզմի անցնելու ժամանակաշրջան:

Այժմ մենք պետք է խոսենք պրոլետարիատի դիկտատուրայի մասին՝ նրա կառուցվածք, տեսակետից, նրա «մեխանիզմի» տեսակետից, այն «փոկերի», «լծակների», և «ուղղություն տվող ուժի» դերի ու նշանակության տեսակետից, վորոնց ամբողջությունը կազմում «պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմը» (Լենին) և վորոնց ողնությամբ իրագործվում

է պրոլետարիատի դիկտատուրայի ամենորշա աշխատանքը:

Այդ ի՞նչ «փոկեր» կամ «լծակներ» են պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում: Այդ ի՞նչ «ուղղություն տվող ուժ» է: Ինչի՞ համար զգացվեց նրանց կարիքը:

Լծակները և փոկերը պրոլետարիատի մասսայական այն կազմակերպություններն են, առանց վորոնց ողնության անհնարին է դիկտատուրայի իրագործումը:

Ուղղություն տվող ուժը պրոլետարիատի առաջավոր ջոկատն է, նրա ավանդարդը, վորը հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական ղեկավար ուժը:

Այդ փոկերը, լծակները և ուղղություն տվող ուժը անհրաժեշտ են պրոլետարիատին այն պատճառով, վոր յեթե նրանք չլինեյին, նա հաղթության համար մղած իր պայքարում կմնար անգեն բանակի վիճակում՝ կազմակերպված և սպառազինված կապիտալի դեմ առ դեմ: Այդ կազմակերպություններն անհրաժեշտ են պրոլետարիատին այն պատճառով, վոր յեթե նրանք չլինեյին, նա անխուսափելի պարտություն կկրեր բուրժուազիայի տապալման, իր իշխանության ամրապնդման համար մղած իր պայքարում, սոցիալիզմի կառուցման համար մղած իր պայքարում: Այդ կազմակերպությունների սիստեմատիկ ողնությունը և ավանդարդի ուղղություն տվող ուժն անհրաժեշտ է նրա համար, վոր առաջ այդ

պայմանների անհնարին ե քիչ թե շատ տեղա-  
կան և ամուր պրոլետարիատի զիկտատուրա-  
վորո՞նք են այդ կազմակերպությունները՝  
Առաջին, բանվորների պրոֆմիուք-յուն-  
ներն են իրենց ճյուղավորումներով կենտրո-  
նում և տեղերում՝ վորպես մի ամբողջ շարժ-  
արտադրական, կուլտուրական, դաստիարակ-  
չական և այլ կազմակերպություններ։ Նրանք  
համախմբում են բոլոր պրոֆեսիաների բան-  
վորներին։ Այդ վոչ-կուսակցական կազմակեր-  
պություն ե։ Պրոֆմիությունները կարելի չե-  
անվանել մեր յերկրում տիրող բանվոր դասա-  
կարգի համապարփակ կազմակերպություն։  
Նրանք հանդիսանում են կոմունիզմի դպրոց-  
ներնք իրենց միջից ընտրում են լավագույն-  
մարդկանց՝ ղեկավար աշխատանք տանելու կա-  
ռավարչության բոլոր ճյուղերում։ Նրանք կա-  
են սլահպանում բանվոր դասակարգի կազմ-  
մեջ յեղած առաջավորների և հետամնացներ-  
միջև։ Նրանք բանվորական մասսաների  
միացնում են բանվոր դասակարգի ավանդա-  
րդին։

Յերկրորդ, խորհուրդներն են իրենց բազ-  
մաթիվ ճյուղավորումներով կենտրոնում  
տեղերում՝ վորպես վարչական, տնտեսական  
ռազմական և այլ պետական կազմակերպու-  
թյուններ՝ դրան գումարած անթիվ քանակու-  
թյամբ աշխատավորական մասսայական ինք-  
նաստեղծ միավորումներ, վորոնք չլքապա-  
տում են այդ կազմակերպությունները և նրան

միացնում են բնակչու-  
թյան հետ։ Խորհուրդներն  
բը քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորների  
մասսայական կազմակերպություններն են։  
Այդ վոչ-կուսակցական կազմակերպություն ե։  
Խորհուրդները հանդիսանում են պրոլետա-  
րիատի զիկտատուրայի ուղղակի արտահայ-  
տությունը։ Խորհուրդների միջոցով են կիրառ-  
վում զիկտատուրայի ամբողջական և սոցիալիզ-  
մի շինարարության բոլոր և ամեն տեսակի  
ձեռնարկումները։ Խորհուրդների միջոցով ե  
երազործվում գյուղացիության պետական  
ղեկավարությունը պրոլետարիատի կողմից։  
Խորհուրդներն են միացնում աշխատավորնե-  
րի միլիոնավոր մասսաները պրոլետարիատի  
ավանդարդի հետ։

Յերրորդ, կոոպերացիան ե իր բոլոր տե-  
սակներով և ճյուղավորումներով։ Սա աշ-  
խատավորների մասսայական կազմակերպու-  
թյուն ե, վոչ-կուսակցական կազմակերպու-  
թյուն, վորը միավորում ե նրանց նախ և ա-  
ռաջ վորպես սոցալոդներ, իսկ հետագայում  
նաև վորպես արտադրողներ (գյուղատնտե-  
սական կոոպերացիա)։ Կոոպերացիան առան-  
ձին նշանակություն ե ստանում պրոլետարի-  
ատի զիկտատուրայի ամբապնդումից հետո,  
լայն շինարարության շրջանում։ Նա հեշտաց-  
նում ե պրոլետարիատի ավանդարդի կա-  
յլը գյուղացիության մասսաների հետ և ստեղ-  
ծում ե հնարավորություն վերջիններին ներ-

գրութեամբ սոցիալիստական շինարարութեան հունի մեջ:

Չորրորդ, յերիտասարդութեան միութեամբն է: Սա բանվոր և գյուղացի յերիտասարդութեան մասսայական կազմակերպութիւնն է, վոչ-կուսակցական կազմակերպութիւն, բայց կուսակցութեան հարող: Նրա նպատակն է ողնել կուսակցութեանը յերիտասարդ սերունդը սոցիալիզմի վողով դաստիարակելու գործում: Նա տալիս է յերիտասարդ սերունդներ պրոլետարիատի մյուս բոլոր մասնախմբի կազմակերպութիւնների համար՝ կառավարչութեան բոլոր ճյուղերում: Յերիտասարդութեան միութիւնը հատուկ նշանակութիւն ստացավ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդումից հետո, պրոլետարիատի կուլտուրական և դաստիարակչական յայն աշխատանքի շրջանում:

Վերջապէս, այդ պրոլետարիատի կուսակցութեամբն է, նրա ամենագարդը: Կուսակցութեան ուժը նրանումն է, վոր նա ներծծում է իր մեջ պրոլետարիատի բոլոր լավագույն մարդկանց՝ նրա մասսայական բոլոր կազմակերպութիւններից: Նրա կոչումն է միավորել պրոլետարիատի առանց բացառութեան բոլոր մասսայական կազմակերպութիւնների աշխատանքը և ուղղել նրանց գործողութիւնները դեպի մի նպատակ, դեպի պրոլետարիատի ազատագրման նպատակը: Իսկ միավորել և ուղղութիւն տալ նրանց մի նպատակի գծով

կացարձակապէս անհրաժեշտ է, վորովհետեւ առանց դրան անհնարին է պրոլետարիատի պայքարի միասնականութիւնը, վորովհետեւ առանց դրան անհնարին է ղեկավարել պրոլետարիական մասսաները իշխանութեան համար, սոցիալիզմի կառուցման համար մղած նրանց պայքարում: Բայց պրոլետարիատի մասսայական կազմակերպութիւնների աշխատանքը միավորել ու նրան ուղղութիւն տալ կարող է միայն պրոլետարիատի ամենագարդը, նրա կուսակցութիւնը:

Պրոլետարիատի կուսակցութիւնը միայն, կոմունիստների կուսակցութիւնը միայն ընդունակ է կատարել հիմնական ղեկավարի այդ դերը պրոլետարիատի դիկտատուրայի սխառմում:

Ինչո՞ւ:

Վորովհետեւ, առաջին, կուսակցութիւնը պրոլետարիատի ու անկուսակցական կազմակերպութիւնների հետ ուղղակի կապեր ունեցող և շատ հաճախ նրանց ղեկավարող լավագույն տարրերի հաւաքածայն է: Յերկրորդ, վորովհետեւ կուսակցութիւնը վորպէս բանվոր դասակարգի լավագույն մարդկանց հաւաքածայն՝ հանդիսանում է բանվոր դասակարգի լավագույն առաջնորդներ, պատրաստելու լավագույն դպրոց, առաջնորդներ, վորոնք ընդունակ են ղեկավարելու իր դասակարգի կազմակերպման բոլոր ձեւերը: Յերրորդ, վորովհետեւ կուսակցութիւնը՝ վորպէս բանվոր դասակարգի առաջնորդների լավագույն դպրոց, իր փորձով և հեղինակութեամբ միակ կազմակերպութիւնն է, վոր ընդունակ է կենտրոնացնելու պրոլետարիատի պայքարի ղեկավարութիւնը և

այգալիսով բանվոր դասակարգի բոլոր և առհասարակ անկուսակցական կազմակերպությունները վերածելու կուսակցությունը բանվոր դասակարգին միացնող սպասարկու որդանների և հաղորդիչ փոկերի, (Տե՛ս. «Լենինի միջին հիմունքների մասին», հջ 134—135) :

Կուսակցությունը հիմնական ղեկավար ումն է պրոլետարիատի ղեկատարության սխեմում :

«Կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային միավորման բարձրագույն ձևն է» (Լենին) :

Այսպես ուրեմն, պրոֆիտուրյունները՝ վորպես պրոլետարիատի մասսայական կազմակերպությունը, վորը շաղկապում է կուսակցությունը դասակարգի հետ նախ և առաջ արտադրական գծով. խորհուրդները՝ վորպես աշխատավորների մասսայական կազմակերպություն, վորը շաղկապում է կուսակցությունը վերջիններիս հետ նախ և առաջ պետական գծով. կոոպերացիան՝ վորպես գլխավորապես գյուղացիության մասսայական կազմակերպություն, վորը շաղկապում է կուսակցությունը գյուղացիության մասնանների հետ նախ և առաջ տնտեսական գծով, գյուղացիությունը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու գծով. յերիտասարդության միությունը՝ վորպես բանվորական և գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպություն, վորը կոչված է հեշտացնելու պրոլետարիատի ավանգարդի համար

նոր սեսընդի սոցիալիստական դաստիարակման և յերիտասարդ ռեզերվների պատրաստման գործը. և վերջապես կուսակցությունը՝ վորպես ուղղություն տվող հիմնական ուժ պրոլետարիատի ղեկատարության սխեմում, վորը կոչված է ղեկավարելու բոլոր այդ մասսայական կազմակերպությունները, — այս և բնականուր առմամբ ղեկատարության «մեխանիզմի» պատկերը, «պրոլետարիատի ղեկատարության սխեմի» պատկերը :

Առանց կուսակցության, վորպես հիմնական ղեկավար ուժի, անհնարին է պրոլետարիատի շատ թե քիչ տեական և ամուր ղեկատարում :

Ուրեմն, խոսելով Լենինի բառերով, «ստացվում է, ընդհանուր առմամբ, ձևականորեն վոչ կոմունիստական, ճկուն և համեմատաբար լայն, շատ զորեղ պրոլետարական ապարատ, վորի միջոցով կուսակցությունը սերտորեն կապված է դասակարգի և մասսայի հետ ու վորի միջոցով՝ կուսակցության ղեկավարությունը, իրագործվում է դասակարգի ղեկատարումը» (տ. հ. XVII, էջ 139) :

Այդ չի նշանակում, իհարկե, վոր կուսակցությունը կարող է կամ պետք է փոխարինի պրոֆմիություններին, խորհուրդներին և մյուս մասսայական կազմակերպություններին : Կուսակցությունն իրագործում է պրոլետարիատի ղեկատարումը : Բայց նա իրագործում է այդ վոչ թե անմիջականորեն, այլ

պրոֆմիությունների ոգնութեամբ, խորհուրդների և նրանց ճյուղավորումների միջոցով: Առանց այդ «փոկերի» փոքրիչատես հաստատուն դիկտատուրա անհնարին կլինեն:

«Ձի կարելի, —ասում է Լենինը, —իրագործել դիկտատուրան առանց մի քանի «փոկերի» ավանդարդից դեպի առաջավոր դասակարգի մասսան և նրանից դեպի աշխատավորները մասսան...»: «Կուսակցությունը, այսպես ասած, ներծծում է իր մեջ պրոլետարիատի ավանդարդը և այդ ավանդարդն իրագործում է պրոլետարիատի դիկտատուրան: Առանց ունենալու այնպիսի ֆունդամենտ, ինչպես պրոֆմիությունները, չի կարելի իրագործել դիկտատուրան, չի կարելի կատարել պետական ֆունկցիաները, իսկ դրանք իրագործել հարկ է լինում ելլի մի շարք նոր տիպի հաստատությունների միջոցով, այն է՝ խորհրդային ազգային միջոցով»\*) (տես՝ հատ. XVIII, մ. I, էջ 9 և 8):

Կուսակցության ղեկավար դերի բարձրագույն արտահայտությունը, որինակ, մեզ մոտ, խորհրդային միության մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի յերկրում, պետք է համարել այն փաստը, վոր առանց կուսակցության ղեկավարող ցուցումների մեղանում չի լուծվում քաղաքական կամ կազմակերպական վոչ մի կարևոր հարց մեր խորհրդային և մյուս մասսայական կազմակերպությունների կողմից: Այս իմաստով կարելի կլինեն ասել, թե պրոլետարիատի դիկտա-

\*) Ընդգծումներն իմն են: Ի. Ստ.:

տուրան ըստ եյուրյան նրա ավանդարդի «դիկտատուրան» է, նրա կուսակցության՝ վորպես պրոլետարիատի հիմնական ղեկավար ուժի «դիկտատուրան» է: Ահա թե ինչ եր ասում այս մասին Լենինը Կոմինտերնի 2-րդ կոնգրեսում:

«Տեններն ասում է, թե ինքը պրոլետարիատի դիկտատուրայի կողմնակից է, սակայն պրոլետարիատի դիկտատուրան նա պատկերացնում է վոչ այնպես, ինչպես մենք ենք պատկերացնում: Նա ասում է, թե պրոլետարիատի դիկտատուրա ասելով մենք հասկանում ենք, ըստ եյուրյան») նրա կազմակերպված և գիտակից փոքրամասնության դիկտատուրա: Յեվ իրոք, կապիտալիզմի դարաշրջանում, յերբ բանվորական մասսաները յենթարկվում են անվերջ շահագործման և չեն կարողանում դարգացնել իրենց մարդկային ընդունակությունները, բանվորական քաղաքական կուսակցությունների համար ամենից ավելի բնորոշը հենց այն է, վոր նրանք կարող են ընդգրկել միայն իրենց դասակարգի փոքրամասնությունը: Քաղաքական կուսակցությունը կարող է ընդգրկել լոկ դասակարգի փոքրամասնությունը, այնպես՝ ինչպես իրոք գիտակից բանվորները ամեն մի կապիտալիստական հասարակության մեջ կազմում են լոկ բոլոր բանվորների փոքրամասնությունը: Ուստի մենք հարկադրված ենք ընդունել, վոր այդ գիտակից փոքրամասնությունը միայն կարող է ղեկավարել բանվորական լայն մասսաները և տանել նրանց իր հետևից: Յեվ յեթե ընկ: Տենները ասում է, թե նա թշնամի յե կուսակցության, սակայն միաժամանակ կողմնակից է, վոր ամենից լավ կազմակերպված և ամենից ավելի հեղափո-

\*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

խական բանվորների փոքրամասնութիւնը ուղի  
ցույց տա ամբողջ պրոլետարիատին, ապա յետ  
կատեմ, վոր մեր մեջ իրականում տարբերութիւն  
չկա» (Հատոր XXV, էջ 347) :

## ՄԱՌ՝ ՀԱՍԼԿՅԵՍ ՀԱՄԱՄԻՌՔԵՆԱԿԱՆ

### V ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

1927 թ. ՄԱՐՏԻ 29-ԻՆ

Ընկերներ՝: Թույլ տվեք վողջունել ձեզ  
մեր կուսակցութեան Կենտրոնական կոմիտեյի  
անունից: (Ծափահարութիւններ): Թույլ  
տվեք ցանկալ ձեզ Հաջողութիւն մեր յերկրի  
բանորա-գյուղացիական, յերիտասարդութեան  
կազմակերպման և քաղաքական կրթութեան  
շփարին աշխատանքում: Կոմյերիտմիութեան  
թիւնը մեղանում միշտ քայլել է մեր մար-  
տիկների առաջին շարքերում: Հուսանք, վոր  
կոմյերիտմիութիւնը հեղափոխում ևս կը-  
կանգնի առաջին շարքերում, բարձր տանելով  
առաջ սոցիալիզմի դրօշը: (Ծափահարու-  
թիւններ): Իսկ այժմ, վողջունից հետո,  
թույլ տվեք անցնել յերկու հարցերի, վորոնց  
մասին քիչ առաջ ինձ հետ խոսում եյին ձեր  
ընկեր-կոմյերիտականներից մի քանիսը:

Առաջին հարցը—դա մեր արդյունաբերա-  
կան քաղաքականութեան հարցն է: Այդ, այս-  
պես ասած, մեր ներքին գործերն են: Իսկ  
յերկրորդ հարցը—նանկինի դեպքերի հարցն է:

Այդ ել, ուրեմն, արտաքին գործեր են: Ընկեր-  
ներ, Հիմնական դիժը, վորով պետք է ընթա-  
նա մեր ինդուստրիան, Հիմնական դիժը, վոր  
պետք է վորոշի նրա բոլոր հետագա քայլերը,  
արդյունաբերական արտադրանքի ինքնարժե-  
քի սխտեմատիկ իջեցման դիժն է, արդյունա-  
բերական ապրանքների բացթողման դների  
սխտեմատիկ իջեցման դիժը: Այդ այն գր-  
խաւոր ճանապարհն է, վորով պետք է գնա մեր  
ինդուստրիան, յեթե նա ուզում է զարգանալ,  
յեթե նա ուզում է իր հետեից տանել գյուղա-  
տնտեսութիւնը, յեթե նա ուզում է ամրա-  
պնդել և ընդարձակել մեր սոցիալիստական  
եկոնոմիկայի հիմքը:

Վորտեղից առաջացաւ այս դիժը:

Վորոնք են այն պատճառները, վորոնք  
սլայմանաւորում են այդ դի շանհրաժեշտու-  
թիւնը և նպատակահարմարութիւնը:

Այդ դիժը սլայմանաւորւում է, առնվա-  
զրն, չորս հիմնական պատճառներով:

Առաջին պատճառն այն է, վոր բարձր  
դների վրա հիմնված արդյունաբերութիւնը  
չէ և չի կարող լինել իսկական արդյունաբե-  
րութիւն, վորովհետեւ այդպիսի արդյունա-  
բերութիւնն անխուսափելիորեն կվերասերվի  
ու կզառնա ջերմոցային բույս, վոր չունի և չի  
կարող ունենալ կենսունակութիւն: Միայն  
այն արդյունաբերութիւնը, վորը սխտեմա-  
տիկորեն իջեցնում է ապրանքների գները, մի-  
այն այն արդյունաբերութիւնը, վորը հիմ-

ներվում ե արտադրանքի ինքնարժեքի սխտեմատիկ իջեցման վրա, միայն այն արդյունաբերությունը, վորը, հետեւաբար, սխտեմատիկ կերպով բարելավում ե իր արտադրությունը, տեխնիկան ե աշխատանքի կազմակերպումը, տնտեսության ղեկավարման մեթոդները ե ձևերը—միայն այդպիսի արդյունաբերություն ե հարկավոր մեզ, վորովհետեւ միայն նա կարող ե զարգանալ դեպ առաջ ե միայն նա կարող ե տալ պրոլետարիատին լիակատար հաղթանակ:

Յերկրորդ պատճառն այն ե, վոր մեր արդյունաբերությունը հիմնվում ե ներքին շուկայի վրա: Մենք չենք կարող ե հնարավորություն չունենք մրցելու կապիտալիստների հետ արտասահմանյան շուկայում: Ներքին շուկան մեր արդյունաբերության համար հանդիսանում ե նրա հիմնական շուկան: Սակայն սրանից հետեւում ե, վոր մեր արդյունաբերությունը կարող ե զարգանալ ե ամրանալ միայն այն չափով, վոր չափով կզարգանա ե կընդարձակվի մեր ներքին շուկան, այդ շուկայի տարողությունը, արդյունաբերական ապրանքների մասսայական պահանջը: Իսկ ինչո՞ւ ե պայմանավորվում մեր ներքին շուկայի ընդարձակումը, նրա տարողության ուժեղացումը: Այդ պայմանավորվում ե, ի միջի այլոց, արդյունաբերական ապրանքների գների սխտեմատիկ իջեցումով, այսինքն մեր արդյունաբերության

զարգացման այն հիմնական գծով, վորի մասին յետ վերը խոսեցի:

Յերրորդ պատճառն այն ե, վոր առանց արդյունաբերական ապրանքների գների իջեցման, առանց արդյունաբերական ապրանքների սխտեմատիկ եժանացման անհնար ե պահպանել այն պայմանները, վորոնք անհրաժեշտ են բանվորների աշխատավարձի հետագա բարձրացման համար: Նախ, բանվորներն իրենք են հանդիսանում արդյունաբերական ապրանքների սպառողներ, վորի հետեւանքով այդ ապրանքների գների իջեցումը չի կարող լուրջ նշանակություն չունենալ ոեւալ աշխատավարձի պահպանման ե բարձրացման համար: Յերկրորդ, արդյունաբերական ապրանքների գների իջեցումը պայմանավորում ե գյուղատնտեսական մթերքների գների կայունությունը, մթերքներ, վոր սպառում են քաղաքներում գլխավորապես բանվորները, ինչ վոր նույնպես չի կարող ամենալուրջ նշանակություն չունենալ բանվորների ոեւալ աշխատավարձի պահպանման ե բարձրացման համար: Կարո՞ղ ե արդյոք մեր սոցիալիստական պետությունը սխտեմատիկորեն չբարձրացնել բանվորների աշխատավարձը: Վո՞չ, չի կարող: Բայց սրանից հետեւում ե, վոր արդյունաբերական ապրանքների գների սխտեմատիկ իջեցումը հանդիսանում ե անհրաժեշտագույն նախդրյալներից մեկը բանվոր դասակարգի կյանքի մակարդակի հարաճուն, բարձրացման համար:

Վերջապես, չորրորդ պատճառն այն է, վոր առանց արդյունաբերական ապրանքների գների սխտեմատիկ իջեցման մենք չենք կարող պահպանել այն զոդումը պրոլետարիատի և գյուղացիության միջև, ինդուստրիայի և գյուղատնտեսության միջև, վորը կազմում է պրոլետարիատի դիկտատուրայի հիմքը մեր յերկրում: Դուք գիտեք, վոր գյուղացին թանգ է վճարում արդյունաբերական ապրանքների մանուֆակտուրայի, մեքենաների և այլնի համար: Դուք գիտեք, վոր այս հանգամանքը լուրջ դժգոհություն է առաջ բերում գյուղացիության մեջ և դժվարացնում է գյուղատնտեսության աճումը: Իսկ ի՞նչ է բղխում դրանից: Դրանից բղխում է լոկ այն, վոր մենք պետք է վարենք արդյունաբերական ապրանքների գների սխտեմատիկ իջեցման քաղաքականություն, յեթե մենք իրոք ցանկանում ենք պահպանել զոդումը, պահպանել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը ու զարկ տալ գյուղատնտեսությանը: Մակայն ի՞նչ է պահանջվում, վորպեսզի հնարավոր և միանգամայն իրագործելի դառնա արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքի և ապրանքների գների իջեցման քաղաքականությունը: Դրա համար անհրաժեշտ է արմատապես բարեկալիքի ուրտադրության տեխնիկան, արմատապես բարելավել աշխատանքի կազմակերպումը ձեռնարկություններում, արմատապես բարելավել և պարզացնել տնտեսական աֆրոշ տպարատը, վճռական պայքար մղել տնտեսական ապարա-

տի բյուրոկրատիզմի դեմ: Այս ամենը մեզանում կոչվում է արտադրության և տնտեսության ղեկավարման սոցիալիստական ռադիկալացում: Մեր արդյունաբերությունը մտել է զարգացման այնպիսի փուլ, յերբ աշխատանքի արտադրողականության լուրջ աճումը և արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքի սխտեմատիկ իջեցումը դառնում են անհնար, առանց կիրառելու նոր, լավագույն տեխնիկա, առանց կիրառելու աշխատանքի նոր, լավագույն կազմակերպում, առանց պարզացնելու և եփանացնելու մեր տնտեսական ապարատը: Այս բոլորն անհրաժեշտ է մեզ վոչ միայն այն պատճառով, վոր պետք է բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և իջեցնել արդյունաբերական ապրանքների գները, այլ և նրա համար, վորպեսզի այդ հիման վրա ձեռք բերված խնայողությունները գործածվեն մեր ինդուստրիայի հետագա զարգացման և ընդլայնման համար:

Ահա՛ թե ինչու հարկավոր է մեզ արտադրության և տնտեսության ղեկավարման սոցիալիստական ռադիկալացումը:

Այսպիսով, ստացվում է մի շղթա. մենք չենք կարող զարգացնել ինդուստրիան, առանց սխտեմատիկորեն իջեցնելու արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքը և ապրանքների բացթողման գները, իսկ արդյունաբերական ապրանքների գներն իջեցնել անհնար է, առանց կիրառելու նոր տեխնիկա, աշխա-

տանքի կազմակերպման նոր ձևեր, անտեսութ-  
յան ղեկավարման նոր, պարզացրած յեղա-  
նակներ: Այստեղից է առաջանում արտադրու-  
թյան և անտեսության ղեկավարման սոցիա-  
լիստական ռադիոնալացման հարցը, վորպես  
մեր որերի ամենավճռական հարցերից մեկը:

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր մեր  
կուսակցության կենտկոմի կողմից վերջերս  
ընդունված վորոշումը արտադրության և  
անտեսության ղեկավարման ռադիոնալացման  
մասին հանդիսանում է մեր կուսակցության  
կարևորագույն վորոշումներից մեկը, վորոնք  
սահմանափորում են մեր արդյունաբերական  
քաղաքականությունը առաջիկա ժամանակա-  
շրջանում:

Ասում են, թե ռադիոնալացումը պահան-  
ջում է վորոշ ժամանակավոր զոհեր բանվոր-  
ների վորոշ խմբերի կողմից, այդ թվում և  
յերիտասարդության: Այդ ճիշտ է, ընկերներ:  
Մեր հեղափոխության պատմությունն ասում  
է, վոր վոչ մի խոշոր քայլ չի արվել մեղանում,  
առանց վորոշ զոհերի բանվոր դասակարգի ա-  
ռանձին խմբերի կողմից՝ մեր յերկրի բանվոր-  
ների ամբողջ դասակարգի շահերի համար:  
Վերցնենք թեկուզ քաղաքացիական պատե-  
րազմը, թեև ներկայիս աննշան զոհերը ամե-  
նեին չի կարելի համեմատել այն լուրջ զոհերի  
հետ, վոր տեղի էլին ունենում մեզ մոտ քաղա-  
քացիական պատերազմի շրջանում: Դուք տես-  
նում եք, վոր այդ զոհերը մեզ մոտ այժմ ար-

դեն հատուցվում են տոկոսով հանդերձ: Հա-  
զիվ թե հարկ լինի ապացուցելու, վոր ներկայիս  
աննշան զոհերը մոտիկ ապագայում կհատուց-  
վեն լիովին: Ահա թե ինչու յես կարծում եմ,  
վոր մենք չպետք է կանգ առնենք մի քանի  
աննշան զոհերի առաջ՝ ամբողջ բանվոր դասու-  
կարգի շահերի համար:

Կոմյերիտմիությունը մեղանում միշտ  
կանգնել է մեր մարտիկների առաջին շարքե-  
րում: Ինձ ծանոթ չեն դեպքեր, յերբ նա հեռ  
մնար մեղանում մեր հեղափոխական կյանքի  
իրադարձություններից: Յես չեմ կասկածում,  
վոր կոմյերիտմիությունը այժմս ել սոցիա-  
լիստական ռադիոնալացման կենսագործման  
հարցում կգրավի իրեն պատշաճ տեղը (Ծափա-  
հարուք յունենք):

Այժմ թույլ տվեք անցնել յերկրորդ հար-  
ցին—նանկինյան դեպքերի հարցին: Յես կար-  
ծում եմ, վոր նանկինի դեպքերը մեզ համար  
անակնկալ չպետք է լինեն: Իմպերիալիզմը չի  
կարող ապրել առանց բռնության և թալանի,  
առանց արյան և կրակոցների, դրա համար ել  
նա իմպերիալիզմ է: Ուստի նանկինի դեպքերը  
մեզ համար չեն կարող անսպասելի լինել:

Ի՞նչ են վկայում նանկինի դեպքերը:

Վո՞րն է նրանց քաղաքական իմաստը:

Նրանք վկայում են, վոր իմպերիալիզմի  
քաղաքականության մեջ առաջացել է բեկում,  
բեկում գինված իրադարձությունից դեպի պին-  
ված պատերազմ ընդդեմ հինական ժողովրդի:

Մինչև նանկինյան դեպքերը իմպերիալիզմը ճշնում եր ծածկել իր մտադրությունները մեղրածոր խոսքերով խաղաղության և այլ յերկրների ներքին գործերին չմիջամտելու մասին, «քաղաքակրթության» և «մարդասիրության» դիմակով, Աղգերի Լիգայով և այլն: Նանկինի դեպքերից հետո իմպերիալիզմը դեռ և նեառում և՛ մեղրածոր խոսքերը, և՛ չմիջամտելը, և՛ Աղգերի Լիգան, և՛ ամեն մի այլ դիմակ: Այժմ իմպերիալիզմը կանգնած է ամբողջ աշխարհի առաջ բացահայտ դիշատիչի և կեղեքիչի իր ամբողջ մերկությամբ:

Բուրժուական պացիֆիզմին ևս մի ջախջախիչ հարված հասցվեց: Վորովհետև իրականում ի՞նչ կարող են հակադրել իմպերիալիստական պացիֆիզմի տաղերգուները, ինչպես Բոնկուրները, Բրեյտշեյդները և այլն, Նանկինի բնակիչների զնդակահարման փառալիմ, բացի պացիֆիստական կեղծ ու պատիր ճառերից:

Աղգերի Լիգան ևս մի աստակ ստացավ: Վորովհետև ո՞վ կարող է, բացի իմպերիալիզմի լակեյներից, նորմալ համարել այն փաստը, վոր Աղգերի Լիգայի անդամներից մեկը զնդակահարում է Աղգերի Լիգայի մի այլ անդամի աղգարնակչությանը, իսկ ինքն Աղգերի Լիգան ստիպված է լռել, յենթադրելով, վոր այդ իրեն չի վերաբերում:

Ապացուցվեց, վոր մեր կուսակցությունը իրավացի չէր, զնահատելով զորքերի փոխադրությունը դեպի Շանհայ վորպես չինական

Ժողովրդի վրա կատարվելիք հարձակումների նախերգանք: Վորովհետև այժմ ո՞վ չի կարող չտեսնել, բացի կույրերից, վոր Շանհայում զորքերը իմպերիալիզմին հարկավոր եյին «խոսքից» «գործի» անցնելու համար:

Այս և Նանկինի դեպքերի իմաստը:

Ի՞նչ դիտավորություններ կարող եյին ունենալ իմպերիալիստները, ձեռնարկելով նանկինյան ավանտյուրան:

Հնարավոր է, վոր պատռելով իրենց դիմակը և հրետանին որակազդի դնելով Նանկինում, իմպերիալիստները ուղում եյին դեպի հեռ շուռ տալ պատմության անիվը, վերջ դնել աճող հեղափոխական շարժմանը բոլոր յերկրներում և պայքար մղել հանուն կապիտալիզմի այն հարաբերական կայունության տալիզմի այն հարաբերական կայունության, վորը տեղի ուներ մինչև իմպերականիզման, վորը տեղի ուներ մինչև իմպերիալիստական պատերազմը: Հայտնի չէ, վոր կապիտալիզմը իմպերիալիստական պատերազմից դուրս յեկավ անբուժելի վերքերով: Հայտնի չէ, վոր տասը տարի առաջ ԽՍՀՄ բանվորները և դյուղացիները ճեղքեցին կապիտալիստները և անբուժելի վերք հասցրին տալի ֆրոնտը և անբուժելի վերք հասցրին նրան: Հայտնի չէ, վոր իմպերիալիստական պատերազմը խախտեց իմպերիալիստական տիրապետության հիմքերը գաղութային և կախյալ յերկրներում: Հայտնի չէ, վոր Հոկտեմբերից հետո տասը տարի անց չինական բանվորները և դյուղացիները նույնպես սկսեցին ճեղքել կապիտալի ֆրոնտը, և չկա վոչ մի

հիմք յենթադրելու, վոր նրանք չեն ճեղքի այն ամբողջովին: Այսպես ուրեմն, հնարավոր է, վոր իմպերիալիստները ուզում եյին այդ բոլորը ջնջել մի հարվածով և սկսել «պատմության նոր եջ»: Իսկ յեթե իրոք նրանք ուզում եյին այդ, ապա պետք է խոստովանել, վոր նրանք ձեռնուռնայն մնացին: Վորովհետև միայն մանկամիտ մարդիկ կարող են կարծել, թե հրետանու որենքները ուժեղ են պատմության որենքներից, թե կարելի չե դեպի հետ չըջել պատմության անիվը Նանկինի կրակոցներով:

Հնարավոր է, վոր իմպերիալիստները կրակելով Նանկինում, ուզում եյին դրանով տհաքեկել մյուս յերկրների ճնշված ժողովուրդներին, վորոնք ձգտում են ազատության, կարծես թե ասելով նրանց. լսեցե՛ք, ձեզ համար է Նանկինի պատմությունը: Այդ բնավ անհավանական չէ, ընկերներ: Ահարեկման քաղաքականությունը իր հիմքերն ունի իմպերիալիզմի պատմության մեջ: Բայց վոր այդ քաղաքականությունը բանի պետքական չէ և չի հասնում նպատակին, այդ մասին հազիվ թե տարակույս լինի: Այդ քաղաքականությունը ժամանակին հաջող կերպով կիրառում եր ռուսական ցարիզմը: Սակայն ինչո՞վ վերջացավ այդ: Դուք գիտե՞ք, վոր այդ վերջացավ ցարիզմի կոտորյալ սնանկությամբ:

Հնարավոր է, վերջապես, վոր կրակելով Նանկինում, իմպերիալիստները ուզում եյին

մահացու հարված հասցնել չինական հեղափոխության կրծքին և անհնար դարձնել, առաջին, հարավային զորքերի հետագա առաջխաղացումը և Չինաստանի միացումը և, յերկրորդ, կոնցեսիաների վերաբերյալ բանակցությունների այն պայմանների իրադրծումը, վորոնք անցկացվել եյին իմանկոույում: Այդ միանգամայն հնարավոր է և, թերևս, միանգամայն հավանական: Վոր իմպերիալիստները չեն ուզում Չինաստանի միասնականությունը և գերադասում են ունենալ յերկու Չինաստան, վորպեսզի «ափելի հաջող մանեվրեն», — այդ մասին արդեն մի քանի անգամ զրուցել ե կապիտալիստական մամուլը: Ինչ վերաբերում է Շանհայի և մյուս կոնցեսիաներին, ապա հազիվ թե կարելի լինի կասկածել, վոր իմպերիալիստներից շատերը «չեն համակրում» այն պայմաններին, վորոնք մշակվել և հաստատվել են իմանկոույում: Յեվ ահա, կրակելով Նանկինում, իմպերիալիստները յերևի ուզում եյին դրանով ասել, թե նրանք գերադասում են ապագայում բանակցությունները վարել ազդային կառավարության հետ հրետանու ճնշման և նվազակցության տակ, — այդպես է արդեն իմպերիալիստների յերաժշտական ճաշակը: Վոր այդ տարորինակ յերաժշտությունը բավական նման է մարդակերների յերաժշտության, դրանից, ըստ յերեույթին, չեն քաշվում իմպերիալիստները: Կհասնե՞ն արդյոք նրանք իրենց նպատակին, այդ ցույց կտա մոտիկ ապագան: Անհրաժեշտ

ե, սակայն, նշել, վոր նրանք առայժմ հասել են մի բանի—ատելության խորացումը չինացիների մեջ ընդդեմ իմպերիալիզմի, Գամինդանի ուժերի համախմբումը և Զինաստանի հեղափոխական շարժման նոր տեղաշարժը դեպի ձախ։

Հաղիվ թե կարելի լինի տարակուսել, վոր առայժմ հակառակ արդյունքներ են ստացվում։

Ուրեմն դուրս ե գալիս, վոր կրակելով նանկինում, իմպերիալիստներն ուրիշ բան ելին ուղում, քայց իրականում այլ բան ստացվեց, այն ել ուղղակի հակառակն այն բանին, վորին նրանք ձգտում ելին։

Սրանք են նանկինի դեպքերի արդյունքները և հեռանկարները։

Այս ե կոնսերվատիվ բանակի իմաստունների քաղաքականությունը։

Զուր չեն ասել, վոր ում աստված ուղում ե կործանել, առաջ նրա խելքն ե առնում։ (Բուռն, յերկար ժամանակ չլռող ծափահարություններ։)

## ՄԱՌ՝ ՀԱՄԼԿՅԵՍ ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ VIIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1928 թ. ՄԱՅՈՒ 16-ին

Ընկերներ՝ Սովորաբար ընդունված ե համադրումներում խոսել նվաճումների մասին։ Տարակույս չկա, վոր մենք նվաճումներ ունենք։ Նրանք, այդ նվաճումները, իհարկե,

փոքր չեն, և կարիք չկա նրանց թաղցնելու։ Բայց, ընկերներ, մեղանում վերջերս այնքան շատ են խոսում նվաճումների մասին և յերբեմն այնքան անհամ, վոր կորչում ե ասվածը կրկնելու ամեն մի ցանկություն։ Ուստի թույլ տվեք ինձ խախտել ընդհանուր կարգը և ասել ձեզ մի քանի խոսք վոչ թե մեր նվաճումների, այլ մեր թույլ կողմերի և մեր խնդիրների մասին՝ այդ թույլ կողմերի կապակցությամբ։

Յեա նկատի ունիմ, ընկերներ, այն խընդիրները, վորոնք ընդգրկում են մեր ներքին շինարարության հարցերը։

Այդ խնդիրները վերաբերում են յերեք հարցի—մեր քաղաքական աշխատանքի դժի հարցը, ժողովրդական լայն մասսաների ակտիվության բարձրացման հարցն ընդհանրապես, բանվոր դասակարգի՝ հատկապես, բյուրոկրատիզմի դեմ մղվելիք պայքարի հարցը և, վերջապես, մեր տնտեսական շինարարության նոր կադրերի պատրաստման հարցը։

### 1. Ամբապնդեցիմ բանվոր դասակարգի մարտական պատրաստությունը

Սկսենք առաջին հարցից։ Ներկա մոմենտի ընտրող գիծն այն ե, վոր մենք արդեն հինգ տարի յե, ինչ կառուցում ենք խաղաղ զարգացման պայմաններում։ Յեա խոսում եմ խաղաղ զարգացման մասին վոչ միայն արևմտյան թշնամիների հետ պատերազմի բացակա-

յուլթյան իմաստով, այլ և յերկրի ներսում  
քաղաքացիական պատերազմի տարրերի բա-  
ցակայության իմաստով: Հենց այս և կոչվում  
մեզ մոտ մեր շինարարության խաղաղ զար-  
գացման պայմաններ: Դուք գիտեք, վոր մենք  
յերեք տարի շարունակ պատերազմեցինք ամ-  
բողջ աշխարհի կապիտալիստների հետ, վոր-  
պեսզի նվաճենք խաղաղ զարգացման այդ պայ-  
մանները: Դուք գիտեք, վոր մենք կռվով ձեռք  
բերինք այդ պայմանները, և մենք այդ համա-  
րում ենք մեր մեծագույն նվաճումը: Սակայն,  
ընկերներ, ամեն մի նվաճում, ինչպես և այդ  
նվաճումը, ունի նաև իր բացասական կողմե-  
րը: Սաղաղ շինարարության պայմանները  
անհետևանք չանցան մեզ համար: Նրանք ի-  
րենց կնիքը դրին մեր աշխատանքի վրա, մեր  
աշխատողներին, նրանց հոգեբանության վրա:  
Այդ հինգ տարվա ընթացքում մենք սահուն  
կերպով առաջ ընթացանք, ինչպես ռելսերի  
վրայով: Դրա հետևանքով մեր մի շարք աշ-  
խատողների մեջ ստեղծվեց այն տրամադրու-  
թյունը, թե ամեն ինչ կգնա հարթ և սահուն,  
վոր մենք նստած ենք կարծես արտակարգ  
դնացքում և ռելսերով առաջ ենք շարժվում  
ուղիղ, առանց գնացքը փոխելու, դեպի սոցիա-  
լիզմ: Այս հողի վրա աճեց «ինքնահոսի» թե-  
որիան, «գուցե, հավանական է» թե-  
որիան, այն թեորիան, թե «ամեն ինչ կարգի  
կընկնի» ինքն իրեն, թե մեզնում չկան դասա-  
կարգեր, մեր թշնամիները հանգստացել են և

մեղ մոտ ամեն ինչ կերթա գրվածի պես: Այս-  
տեղից առաջացավ վորոշ հակում դեպի ինե-  
տութուն, թմրություն: Ահա թմրության այդ  
հոգեբանությունը, ինքնահոսի այդ հոգեբա-  
նությունը աշխատանքի մեջ կազմում է հենց  
խաղաղ զարգացման շրջանի բացասական  
կողմը:

Ինչո՞ւմն է նման տրամադրությունների  
վտանգը: Նրանում, վոր դրանք արգելափա-  
կում են բանվոր դասակարգի աչքերը, չեն  
թողնում նրան տեսնել իր թշնամիներին,  
քնացնում են նրան պարծենկոտ խոսքերով մեր  
թշնամիների թուլության մասին և քայքայ-  
յում են նրա մարտական պատրաստությունը:

Ձի կարելի միտթարվել նրանով, վոր մեր  
կուսակցությունն ունի մի միլիոն անդամ,  
կոմյերիտմիությունը—յերկու միլիոն, պրոֆ-  
միությունները—տասը միլիոն, վոր դրանով  
ամեն ինչ ապահովված է թշնամիներին վերջ-  
նականապես հաղթելու համար: Այդ ճիշտ չե,  
ընկերներ: Պատմությունն ասում է, վոր ա-  
մենամեծ բանակները կործանվել են այն պատ-  
ճառով, վոր գոռոզացել են, չափից շատ վրա-  
տահել իրենց ուժերին, չափից քիչ են հաշվի  
առել թշնամու ուժը, ընկել են թմրածության  
մեջ, կորցրել են մարտական պատրաստությու-  
նը և կրիտիկական մոմենտին հանկարծակիի  
յեն յեկել: Ամենամեծ կուսակցությունը կա-  
րող է հանկարծակիի գալ, ամենամեծ կուսակ-  
ցությունը կարող է կործանվել, յեթե նա

ներանք սթամբուլին մեր բոլոր կազմակերպութ-  
յուններին, կործանեցին ինքնահոսի թիորիան  
և մի ավելորդ լանդամ ընդդեմեցին դասակար-  
գային թշնամիների տակալութունը, վորոնք  
վոյություն ունեն, վորոնք քնած չեն և վորոնց  
դեմ անհրաժեշտ է ամբողջել բանվոր դասա-  
կարգի ուժերը, նրա աշալըջությունը, նրա  
հեղափոխականությունը, նրա մարտական  
պատրաստությունը:

Այստեղից է բղխում կուսակցության հեր-  
թական խնդիրը, նրա ամենորոյա աշխատանքի  
քաղաքական դիժը. բարձրացնել բանվոր դա-  
սակարգի մարտական պատրաստությունն բնո-  
ղեմ նրա դասակարգային քշնամիների:

Զի կարելի չնչել, վոր կոմյերիստիստության  
ներկա համադումարը, իսկ հատկապես «Կոմ-  
սոմոյսկայա Պրամլդա»-ն այժմ ավելի քան յերբ  
և է մտնեցել են այդ խնդրին: Դուք գիտեք, վոր  
հոեաորների ճառերում, ինչպես նաև «Կոմսո-  
մոյսկայա Պրամլդա»-յի հոդվածներում, նըշ-  
վում է այդ խնդրի կարեւորությունը: Այդ շատ  
լավ է, ընկերներ: Անհրաժեշտ է միայն, վոր  
այս խնդիրը չհամարվի ժամանակավոր և վա-  
ղանցիկ մի խնդիր, վորովհետև պրոլետարիատի  
մարտական պատրաստության ուժեղացման  
խնդիրը հանդիսանում է այն խնդիրը, վորը  
պետք է թափանցի մեր ամբողջ աշխատանքում,  
քանի դեռ դասակարգեր կան մեր յերկրում և  
քանի դեռ մենք չըջապատված ենք կապիտա-  
լիստական յերկրներով:

## Զ. Կազմակերպեցե՛ք մասսայական հեղափոխութեան ներկայից

Յերկրորդ հարցը վերաբերում է բյուրոկրա-  
տիզմի դեմ պայքարելու, մեր թերությունների  
մասսայական քննադատությունը կազմակեր-  
պելու, ներքևից մասսայական վերահսկողու-  
թյուն կազմակերպելու խնդրին: Մեր առաջխա-  
ղացման ամենավտխերիմ թշնամիներից մեկը  
բյուրոկրատիզմն է. նա բուն է գրել մեր բոլոր  
կազմակերպություններում. և՛ կուսակցական,  
և՛ կոմյերիտական, և՛ պրոֆեսիոնալ, և՛ տըն-  
տեսական: Յերբ խոսում են բյուրոկրատների  
մասին, սովորաբար մատնացույց են անում հին  
անկուսակցական չինովնիկներին, վորոնց մե-  
ղանում սովորաբար ծաղրանկարներում նկա-  
րում են աննոցավոր մարդկանց տեսքով (ծի-  
ծաղ): Այդ վոչ լիովին ճիշտ է, ընկերներ: Յե-  
թե հարցը վերաբերվի միայն հին բյուրոկրատ-  
ներին, պայքարը բյուրոկրատիզմի դեմ կլինի  
ամենահեշտ գործը: Յովն այն է, վոր բանը  
հին բյուրոկրատները չեն: Հարցը վերաբե-  
րում է, ընկերներ, նոր բյուրոկրատներին,  
խորհրդային իշխանությանը համակրող բյու-  
րոկրատներին, վերջապես հարցը վերաբերում  
է կոմունիստ-բյուրոկրատներին: Կոմունիստ-  
բյուրոկրատը բյուրոկրատի ամենավտանգավոր  
տիպն է: Ինչո՞ւ: Վորովհետև նա գիմակավո-  
րում է իր բյուրոկրատիզմը կուսակցության  
անդամի կոչումով: Իսկ այդպիսի կոմունիս-

տական բյուրոկրատներ մեղնում, դժբախտաբար, քիչ չեն:

Վերցրեք մեր կուսակցական կազմակերպությունները: Դուք կարգացած կլինեք Սմոլինսկի գործի մասին, Արտեմովսկի գործի մասին և այլն: Ի՞նչ է այդ—պատահականություն: Ինչո՞վ են բացատրվում մեր կուսակցական կազմակերպությունների մի քանի ողակներում առաջացած բարքերի այլանդակման և քայքայման այդ խայտառակ գործերը: Նրանով, վոր կուսակցություն մենաշնորհը հասցրին մինչև անհեթեթություն, խլացրին ստորինների ճայնը, վոչնչացրին ներկուսակցական դեմոկրատիան հաստատեցին բյուրոկրատիզմը: Ինչպե՞ս կույնել այդ չարիքի դեմ: Յես կարծում եմ վոչ մի այլ միջոց չկա և չի կարող լինել այդ չարիքի դեմ, բացի կուսակցական մասսաների վերահսկողություն կազմակերպումը ներքևից, բացի ներկուսակցական դեմոկրատիայի հաստատումը: Ի՞նչ կարելի չե առարկել այն բանի դեմ, վոր անհրաժեշտ է բարձրացնել մասսաների ցասումը քայքայված տարրերի դեմ և վզակոթին տալով վոնդել տալ նման տարրերին: Հազիվ թե կարելի չե վորեւե կերպ առարկել դրա դեմ:

Կամ, որինակ, վերցնենք կոմյերիտմիությունը: Դուք, իհարկե, չեք ժխտի, վոր կոմյերիտմիության մեջ կգտնվեն միանգամայն քայքայված տարրեր, վորոնց դեմ անողորպ պայքարն անհրաժեշտ է: Բայց մի կողմը թողնենք

քայքայվածներին: Վերցնենք անսկզբունք խմբակային պայքարի վերջին փաստը կոմյերիտմիության մեջ անձնավորությունների շուրջը, մի պայքար, վոր թունավորում է մթնոլորտը կոմյերիտմիության մեջ: Ինչո՞վ բացատրել, վոր «կոսարեվականներ» և «լորոլիվականներ» կոմյերիտմիության մեջ ինչքան կուզեք, իսկ մարքսիստներ մոմով պետք է փնտռել (ծափահարություններ): Ի՞նչ է վկայում այդ փաստը, յեթե վոչ այն մասին, վոր կոմյերիտմիության վերնախավի վորոշ ողակներում տեղի ունի բյուրոկրատական վոսկրացման պրոցես:

Իսկ պրոֆմիությունները: Ո՞վ կժխտի, վոր բյուրոկրատիզմը պրոֆմիությունների մեջ ուղածի չափ կա: Մեզ մոտ կան արտադրական խորհրդակցություններ ձեռնարկություններում: Մեղնում կան ժամանակավոր վեյտահրակիչ հանձնաժողովներ պրոֆմիություններին կից: Այդ կազմակերպությունների խնդիրն է արթնացնել մասսաներին, հայտարերել մեր թիությունները և նշել մեր շինարարությունը բարելավելու ուղիները: Ինչո՞ւ այդ կազմակերպությունները չեն զարգանում մեզ մոտ: Ինչո՞ւ նրանց մեջ կյանքը չի յեռում: Պարզ չե՞ արդյոք, վոր բյուրոկրատիզմը պրոֆմիություններում գումարած բյուրոկրատիզմը կուսկազմակերպություններում թույլ չեն տալիս, վոր զարգանան բանվոր դասակարգի այդ կարևորագույն կազմակերպությունները:

Վերջապես, մեր տնտեսական կազմակեր-

պությունները: Ո՞վ կժխտի, վոր մեր տնտեսական որգանները չեն տառապում բյուրոկրատիզմով: Վերցրեք թեկուզ Շախտիի գործը: Մի՞թե Շախտիի գործը չի խոսում այն մասին, վոր մեր տնտեսական որգանները չեն գնում առաջ, այլ սողում են, քարշ են գալիս:

Ինչպե՞ս վերջ տալ բյուրոկրատիզմին այդ բոլոր կազմակերպություններում:

Դրա համար կա միայն մեկ ուղի. վերահսկողության կազմակերպումը ներքևից, բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների քննադատության կազմակերպումը մեր հիմնարկների բյուրոկրատիզմի դեմ, նրանց թերությունների, նրանց սխալների դեմ:

Յես գիտեմ, վոր բարձրացնելով միլիոնավոր մասսաների ցասումը մեր կազմակերպությունների բյուրոկրատական այլանդակությունների դեմ, յերբեմն հարկ կլինի դեպքեր մեր վորոշ ընկերներին, վորոնք անցյալում յերախտիք են ունեցել, սակայն այժմ տառապում են բյուրոկրատական ցավով: Բայց մի՞թե այդ կարող ե կասեցնել մեր աշխատանքը ներքևից վերահսկողություն կազմակերպելու ատպարիզում: Յես կարծում եմ, վոր չի կարող ե չպետք ե կասեցնի: Հին յերախտիքների համար պետք ե յերախտապարտ լինել, իսկ նոր սխալների համար կարելի յե մի փոքր թուկել նրանց մեջքը: (Միծաղ, ծափահարություններ): Հապա վո՞նց: Ինչո՞ւ այդ չանել, յերբ գործի շահն այդ ե պահանջում:

Պոսում են վերևից կատարվող քննադատության, ԲԳՏ կողմից, մեր կուսակցության Կենտկոմի կողմից յեղած քննադատության մասին ե այլն: Այդ բոլորը լավ ե, իհարկե: Սակայն այդ դեռ բավական չե: Դեռ ավելին, այժմ գլխավորը բնավ այդ չե: Այժմ գլխավորն այն ե, վոր պետք ե բարձրացնել քննադատության ամենալայն ալիքը ներքևից բյուրոկրատիզմի դեմ ընդհանրապես, մեր աշխատանքի թերությունների դեմ՝ հատկապես: Կազմակերպելով կրկնակի սեղմիչ — ե՛վ վերևից, ե՛վ ներքևից, ծանրության կենտրոնը փոխադրելով ներքևից կատարվող քննադատության վրա, միայն կարելի կլինի հույս ունենալ հաջող պայքար մղելու ե արմատախիլ անելու բյուրոկրատիզմը: Սխալ կլինեք կարծել, թե չինտրարության փորձառություն ունեն միայն զեկավարները: Այդ ճիշտ չե, ընկերներ: Մեր չինտրարությունը կառուցող բանվորների միլիոնավոր մասսաները որր-որին կուտակում են չինտրարության հսկայական փորձ, վորը վոչ պահաս արժեքավոր ե մեզ համար, քան զեկավարների փորձը: Մասսայական քննադատությունը ներքևից, վերահսկողությունը ներքևից անհրաժեշտ են մեզ, իմիջի ալյոց, նրա համար, վոր միլիոնավոր մասսաների այդ փորձը զուր չկորչի, վոր նա հաշվի առնվի ե կենսագործվի:

Այստեղից ե բղխում կուսակցության հերթական խնդիրը. ամոզո՞ւ պայքար բյուրոկրատական

տիգմի դեմ, մասսայական ֆննադատության կազմակերպումը ներքևից, այդ ֆննադատության հաշվառումը մեր բացերի ուղղման վերաբերյալ գործնական վորոշումներում:

2. Կարելի ասել, վոր կոմսոմոլը և հատկապես «Կոմսոմոլսկայա. Պրավդա»-ն հաշվի չեն առել այս խնդրի կարևորությունը: Թեթևությունն այստեղ այն է, վոր հաճախ այդ խնդրի իրադրոծումը մինչև վերջը չի տարվում: Իսկ նրան մինչև վերջը տանելու համար պետք է հաշվի առնել վոչ միայն քննադատությունը, այլ և քննադատություն արդյունքները, այլ և այն բարելավումները, վոր իրագործվում են կյանքում քննադատություն հետևանքով:

### 3. Յերեսասարքությունը պե՛ս է տիրապե՛սի գիտությունը

Յերրորդ խնդիրը վերաբերում է սոցիալիստական շինարարության նոր կադրերի կազմակերպման հարցին:

Ընկերներ, մեր առաջ դրված են մեր ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման մեծագույն խնդիրները: Դյուղատնտեսության ասպարիզում մենք պետք է հիմք դնենք խոշոր միավորված հասարակական տնտեսության: Ընկ. ընկ. Մոլոտովի և Բաումանի այսորվա դիմումից ձեզ հայտնի պետք է լինի, վոր խորհրդային իշխանությունը դնում է մանր, ցիւր ու ցան դյուղացիական տնտեսությունները կոլեկտիվների մեջ միացնելու և

նոր խոշոր հացահատիկային խորհրդային տնտեսություններ ստեղծելու դժվարագույն խնդիրը: Սրանք այնպիսի խնդիրներ են, վորոնք յեթե չլուծվեն, անհնար է լուրջ և արագ առաջընթաց: Յեթե ինդուստրիայի մեջ խորհրդային իշխանությունը հենվում է ամենախոշոր և կենտրոնացած արտադրություն վրա, ապա դյուղատնտեսության մեջ նա հենվում է ամենից ցիրուցան և մանր դյուղացիական տնտեսության վրա, վորը կիսաապրանքային է և տալիս է շատ ավելի քիչ ապրանքային հաց, քան նախապատերազմյան տնտեսությունը, չնայած վոր մենք հասել ենք ցանքերի տարածության նախապատերազմյան նոթմանին: Դրանումն է ապագայում բոլոր հնարավոր դժվարությունների հիմքը հացամթերումների ասպարիզում: Այդպիսի դրությունից դուրս գալու համար պետք է ընդհուպ ձեռնամուխ լինել խոշոր հասարակական արտադրության կազմակերպմանը դյուղատնտեսության մեջ: Սակայն խոշոր տնտեսություն կազմակերպելու համար պետք է իմանալ դյուղատնտեսական դիտությունը: Իսկ իմանալու համար պետք է սովորել: Մեզանում դյուղատնտեսական դիտությունն իմացող մարդկանց սով է: Ահա այստեղից է բղխում նոր հասարակական դյուղատնտեսության կառուցողների յերիտասարդ կադրեր ստեղծելու խնդիրը:

Արդյունաբերության ասպարիզում մեզ մոտ դիտությունը շատ ավելի լավ է: Սակայն

այստեղ ել կառուցողներէ նոր կաղերքի պա-  
կասը արգելակում ե մեր առաջընթացը: Բա-  
վական ե հիշել Շախտիի գործը հասկանալու  
համար սոցիալիստական ինդուստրիայի կա-  
ռուցողներէ նոր կաղերքի հարցի ամբողջ սրու-  
թյունը: Իհարկե, մեղանում կան հին մասնա-  
գետներ արդյունաբերութեան շինարարութեան  
ասպարիզում: Սակայն, առաջին, նրանց թիվը  
քիչ ե, յերկրորդ, նրանցից վոչ բոլորը ուզում  
են կառուցել նոր արդյունաբերությունը, յեր-  
րորդ, նրանցից շատերը չեն ըմբռնում շինա-  
րարութեան նոր խնդիրները, չորրորդ, նրանց  
զգալի մասը ծերացել ե ե չի կարող ոգտագործ-  
վել: Գործն առաջ շարժելու համար պետք ե  
արագ տեմպով ստեղծել մասնագետների նոր  
կաղերք բանվոր դասակարգի մարդկանցից,  
կոմունիստներից: Շինարարությունը կառու-  
ցել ե ղեկավարել ցանկացողներ մեղ մոտ  
վորջան կուզե՞ թե՛ գյուղատնտեսութեան ե  
թե՛ արդյունաբերութեան ասպարիզում, սա-  
կայն կառուցել ե ղեկավարել իմացող մարդիկ  
մեղ մոտ չափազանց քիչ են: Յեվ, բնդհակա-  
ռակը, այդ բնագավառում տգիտությունը  
մեղանում անչափ ե: Դեռ ամէլին, մեղանում  
կան մարդիկ, վորոնք ուզում են գովերգել մեր  
անկուլտուրականությունը: Յեթե դու անգրա-  
դետ ես, կամ գրում ես սխալներով ե պարծե-  
նում ես քո հետամնացութեամբ, ուրեմն դու  
«դադդյահի» բանվոր ես, հարգ ու պատիվ ու-  
նես: Յեթե դու աղաավել ես անկուլտուրակա-

նությունից, սովորել ես գրել-կարդալ, տիրա-  
պետել ես գիտութեանը, ուրեմն դու ոտար ես,  
«կարմել ես» մասսաներից, այլեւս բանվոր չես:  
Յեռ կարծում եմ, վոր մենք վոչ մի քայլ առաջ  
չենք շարժվի, քանի դեռ չենք արմատախիլ  
արել այդ բարբարոսությունը ե վայրենու-  
թյունը: Բանվոր դասակարգը չի կարող դառ-  
նալ յերկրի իսկական տերը, յեթե նա չկարո-  
ղանա ստեղծել իր սեփական ինտելիգեն-  
ցիան, յեթե նա չտիրապետի գիտութեանը ե  
չկարողանա ղեկավարել տնտեսությունը գի-  
տութեան հիման վրա: Պետք ե հասկանալ, ըն-  
կերներ, վոր պայքարի պայմաններն այժմ  
տարբեր են քաղաքացիական պատերազմի շըր-  
ջանի պայմաններից: Քաղաքացիական պատե-  
րազմի շըջանում կարելի յեր հարձակումով,  
քաջութեամբ, անվեհերութեամբ, հեծելազո-  
րային գրոհով վերցնել թշնամու դիրքերը:  
Այժմ, տնտեսական խաղաղ շինարարութեան  
պայմաններում հեծելազորային գրոհով կարե-  
լի յե միայն փչացնել գործը: Քաջությունը ե  
անվեհերությունը հարկավոր են այժմ ել, ինչ-  
պես առաջ: Բայց միայն քաջութեամբ ե անվե-  
հերութեամբ շատ հեռու չես գնա: Այժմ թշնա-  
մուն հաղթելու համար պետք ե գիտենալ կա-  
ռուցել արդյունաբերությունը, գյուղատնտե-  
սությունը, տրանսպորտը, առևտուրը, պետք  
ե հրաժարվել աղայական ե մեծամիտ վերա-  
բերմունքից դեպի առևտուրը: Կառուցելու  
համար պետք ե գիտենալ, պետք ե տիրապե-

տել գիտութեանը, իսկ գիտենալու համար պետք է սովորել: Սովորել համբերատար, համառ կերպով: Սովորել ամենքից—և՛ թշնամիներից, և՛ բարեկամներից, մանավանդ թշնամիներից: Սովորել ասամները սեղմած, առանց վախենալու, վոր թշնամիները կծիծաղեն մեզ վրա, մեր տգիտութեան վրա, մեր հետամնացութեան վրա: Մեր առաջ կանգնած է մի ամբողջ: Այդ ամբողջը կոչվում է գիտութեան իր գիտելիքների բազմաթիւ ճյուղերով: Այդ ամբողջը մենք պետք է վերցնենք ամեն դեմքով: Այդ ամբողջը պետք է վերցնի յերկտասարդութեանը, յեթե նա ուզում է լինել նոր կյանքի կառուցող, յեթե նա ուզում է դառնալ հին գվարդիայի իսկական փոխարինող:

Մենք այժմ չպետք է բավականանանք պատրաստելով կոմունիստական կադրերը ընդհանրապես, բայց չեւիկյան կադրերը ընդհանրապես, փորոնք կարող են ամեն ինչի մասին քիչ ու միչ շատախոսել: Դիւետանութեանը և ամենագիտութեանը այժմ մեզ համար կապանքներ են: Այժմ մեզ անհրաժեշտ են բազմալիկ-մասնագետներ մետաղի, տեքստիլի, վառելանյութի, քիմիայի, գյուղատնտեսութեան, տրանսպորտի, առևտրի, հաշվապահութեան և այլ և այլ բնագավառներում:

Մեզ այժմ անհրաժեշտ են ամբողջ խմբեր, հարյուրավոր և հազարավոր նոր կադրեր՝ բազմալիկներից, փորոնք կարող են դառնալ գործի տերը գիտելիքների ամենաբազմազան

ճյուղերում: Առանց դրան ավելորդ է խոսել մեր յերկրի սոցիալիստական շինարարութեան առաջ տեմպի մասին: Առանց դրան ավելորդ է խոսել այն մասին, վոր մենք կկարողանանք հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներից:

Տիրապետել գիտութեանը, կոփել բայց չեւիկ-մասնագետների նոր կադրեր գիտելիքների բոլոր ճյուղերում, սովորել, սովորել, սովորել ամենահամառ կերպով—այս է այժմ խնդիրը:

Հեղափոխական յերկտասարդութեան արշավը գիտութեան վրա—ահա ի՛նչ է հարկավոր մեզ այժմ, ընկերներ: (Բուռն ծափահարութեամբ, բացականչութեամբ—Ուոա՛, քրա՛վ: Ամենքը վոտփ յեն յելնում:

# ԲՐԸԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

|                                                                                      |    |
|--------------------------------------------------------------------------------------|----|
| Լենինյան կոմյերիտմիությանը (վոդչույն կոմյերիտ-<br>միության 10-ամյա հոբելյանի առթիվ): | 3  |
| Կոմյերիտմիության միջի հակասությունները մասին                                         | 5  |
| Գյուղի կոմյերիտական ակտիվի մասին                                                     | 10 |
| Պրոլետարական ուսանողության համամիութենա-<br>կան առաջին կոնֆերանսի առթիվ              | 22 |
| Կոմյերիտմիության ինդիւրների մասին                                                    | 28 |
| Կոմյերիտմիության տեղը պրոլետարիատի գիւ-<br>տատուրայի սխեմեմում                       | 40 |
| Ճառ՝ Համ.ԼԿՅԵՄ Համամիութենական V կոնֆե-<br>րանսում                                   | 50 |
| Ճառ՝ Համ.ԼԿՅԵՄ Համամիութենական VIII հա-<br>մագումարում                               | 62 |



ՀՀ Ազգային գրադարան



NL0181602

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.



И. В. СТАЛИН  
О КОМСОМОЛЕ

Издательство ЦК КП (б) А  
Партиздат 1933 Эривань